№ 155 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍԻ
1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍԻ № 155

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիեննայում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Երևանի Թեմական Դպրոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ դասատուներ հետևեալ առարկաներից՝

Հայոց լեզու	շաբաթական	24 դաս.
Ռուս. լեզու և գրականութիւն	»	13 դաս.
Ռուս. պատմ. և աշխարհագրութիւն	»	6 դաս.
Թւաբանութիւն	»	20 դաս.
Կրօն	»	10 դաս.
Գերմաներէն	»	16 դաս.
Ընդհանուր պատմ.	»	10 դաս.
Ընդհանուր աշխարհագր.	»	12 դաս.

Դասագինը մասնագէտ ուսուցիչների համար 70 րուբլի, ոչ մասնագէտներին տրվելու է դասագին 60 րուբլի, գրաւորներով 65 ր.: Խնդիրները ուսման վկայականների հետ միասին ուղարկել հոգաբարձութեանը մինչև յուլիսի 28-ը հետևեալ հասցէով. Эривань, Попечительству Армянской Семинаріи.

Հերթապահ հոգաբարձու՝ բժ. Ց. Տէր-Միքայէլեան
(o.մ.) տո. 560. 3-3

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռուդչևսկայա № 1.
տո. (ե.հ.կ.) 4. 100—78

ԽՈՇՈՐ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

Երբէք անցեալում այնքան մեծ պահանջ չէ զգացվել խոշոր համախմբումների, որքան վերջին դարի ընթացքում:

Անցեալում փոքրիկ ազգեր կռւում էին միմեանց հետ և պատմութեան էջերի լուրջ ուշադրութեան առարկայ դառնում: Այժմ մասսաների ընդհարման, մասսաների մրցութեան և պայքարի խնդիրներ են առաջ եկել:

Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս փորձեր են կատարվում մեծաքանակ համախմբումներ առաջ բերելու: Կազմվում են պետութիւնների դաշնակցութիւններ, որոնք կարող են միլիօնաւոր զօրքեր դուրս բերել միմեանց դէմ և միլիարդներով ծախքեր անել պատերազմներ մղելու համար:

Համախմբումներ կազմակերպելու պահանջը աւելի ևս զգացվում է խաղաղ կուլտուրական նպատակների համար, օրինակ՝ տնտեսական փոխադարձութեան, միատեսակ մաքսային քաղաքականութեան, երկաթուղային և առհասարակ հաղորդակցութեան պէտքերի կարգաւորման համար և այլն:

Եւ ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս միջազգային քաղաքագիտութիւնը անընդհատ և անդադար գործում է ազգերի յարաբերութիւնները կանոնաւորելու և ազգերի համերաշխութեան միջոցները ընդլայնելու:

Այդ տրամադրութեամբ տոգորված՝ շատերը նրանց հարց են տուել և քննութեան առարկայ են դարձրել այն, թէ ինչ դեր կարող են կատարել ազգային և կրօնական մերձեցումները և տարբերութիւնները:

Եւ ահա մեր առաջ հանդէս են գալիս մի շարք համախմբումների առաջարկներ, ծրագիրներ և տենչեր:

Մի անգամ դուք լսում էք երկար դատողութիւններ համիսլամութեան կատարելիք դերի մասին թէ դրական և թէ բացասական տեսակէտով: Մի ուրիշ անգամ ձեզ զբաղեցնում են համագերմանութեան կամ պանգերմանիզմի երազներով, որոնք ձգտում են Միջին Եւրոպան ձուլել մի խոշոր գանգուածի մէջ և յետոյ ճիւղաւորել նրան հեռու և հեռու տեղեր նուաճումներ կատարելու համար: Երրորդ անգամ ձեզ զբաղեցնում են համասլաւոնական միացումների հեռանկարով և ցոյց տալիս, թէ ինչ բաղխումներ կարող են առաջ գալ ընդարձակ տարածութիւնների վրա մասսայական շարժումների դէպքերում: Չորրորդ անգամ ձեր առաջ պատկերացնում են անգլախօս ազգերի միութեան ուրուականները և իրագործումները, ցոյց տալով որ Անգլիան, Ամերիկան, Աւստրալիան, Աֆրիկան և կղզիները պատ- [illegible] կուլտուրան գերիշխող և հեղինակաւոր երկրագնդի վրա: Հինգերորդ անգամ ձեզ վախեցնում են համամօնղօլական կամ դեղին վտանգի հարցով, բացատրելով որ հարիւր միլիօնաւոր չինականեապօնական տարրերը կարող են ողողել երկրագունդը և իրանց գերիշխանութիւնը հաստատել ամենուրեք:

Այդ խոշոր համախմբումների կողքին դուք լսում էք նաև այնպիսի համախմբումների մասին, ինչպէս են համարաբական, համաթիւրքական տրամադրութիւնների և ծրագիրների ուրուագծերը:

Ի՞նչ են այդ համախմբումների ծրագիրները—իրակա՞ն թէ՞ երազական երևոյթներ: Կարո՞ղ են արդեօք նրանք կենսական նշանակութիւն ունենալ և իրական ազդեցութիւն գործել կեանքի հանգամանքների վրա, թէ՞ այդ համախմբումների համար չեն մնացել տարրեր և գաղափարական հիմունքներ իրականութեան մէջ:

Եթէ մենք ցանկանանք ուսումնասիրել այդ խնդիրները, շատ շուտով կը համոզվենք, որ նրանք միատեսակ լուծում չեն ստանայ, և մենք կունենանք մի քանի պատասխաններ՝ այն էլ պայմանական ձևակերպութիւններով:

Անշուշտ՝ ազգային, կրօնական տրամադրութիւնները դեր կատարել են և առաջիկայում ևս ունեն մի որոշ աստիճան դեր կատարելու, բայց նրանց կողքին բուսել և զարգացել են խոշոր և ազդեցիկ կենսական գործօններ, որոնք երբեմն մերձենում են յիշված տրամադրութիւններին, իսկ յաճախ բոլորովին հակասում նրան. և մենք տեսնում ենք դաշնակցութեան մէջ բոլորովին տարբեր և ըստ արտաքինին անմիանալի մեծութիւններ. մենք նկատում ենք, թէ ինչպէս երէկվայ կատաղի թշնամիները այսօր ամուր զինակցութեան և բարեկամութեան մէջ են:

Ազգայնական և կրօնական տրամադրութիւնները ինքնուրոյն կերպով դեռ ևս չեն որոշում համախմբումների ուղղութիւնը և ընթացքը. կարևոր է և միւս գործօնների զօրութեան չափի որոշումը գործնական եզրակացութիւններ անելու համար:

Մենք կը վերադառնանք այս խնդրին առաջիկայում:

Ս. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մեծ պետութիւնների Կ. Պօլսի դեսպաններն այս օրերս ընդունեցին Հայաստանի բարենորոգութիւնների ծրագիրը, որ մշակել էր ռուսաց կառավարութիւնը: Այդ ծրագրով հինգ վիլայէթները—Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբէքիր և Խարբերդ—միացվում են մի շրջանի: Գեներալ-նահանգապետը պիտի լինի օսմանցի, որ նշանակվելու է Թիւրք կառավարութիւնից՝ պետութիւնների համաձայնութեամբ հինգ տարի ժամանակով. նոյն չափ ժամանակով պիտի ընտրվի շրջանային ժողովը, որի մէջ մահմեդականներն ու քրիստոնեաները կը լինեն հաւասար քանակութեամբ: Ժանդարմերիան պիտի կազմվի կէս մասով մահմեդականներից եւրոպական պաշտօնեաների իշխանութեան տակ: Համիդական գունդերը պիտի լինեն հա- [illegible] ներից և մահմեդականներից: Հայոց լեզուի գործածութիւնը պիտի օրինականացվի. պիտի հրատարակվի դպրոցների ազատութիւն: Կազմված են նոյնպէս և ուրիշ բարենորոգումներ: Ներկայ ծրագրի գլխաւոր աղբիւր ծառայում են 1880 և 1895 թ. թ. բարենորոգումների ծրագիրները.

(«Бат. Вѣст.»)

—

Կ. Պօլսից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին, որ Բ. Դրանը տեղի ունեցած արտակարգ նիստից յետոյ մեծ վէզիրը յայտնել է դեսպաններին, որ Թիւրքիան աւելի շուտ հա- [illegible] Ադրիանուպոլիսը: Ոչ մի իշխանութիւն չի կարող ստիպել Թիւրքաց զօրքին մաքրելու Թրակիան, այլապէս կայսրութեանը վտանգ է սպառնում: Թիւրքիան գերադաս է համարում կորցնել Ադրիանուպոլիսը կռւից յետոյ, քան յօժարակամ: Փոքր-Ասիայից նոր զօրաբանակ է ուղարկված Ստամբուլ:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Ռոդոսթոյի դէպքը

Կ. Պօլիս, 6 յուլիս

Ամբողջ հինգ օրերու տատանումէն և վարանումէն յետոյ, վերջապէս այսօր կը ստուգուի, թէ Ռոդոսթոյի մէջ խուժանի կողմէ հայոց նկատմամբ ջարդ գործադրուած է:

Կ. Պոլսոյ գրեթէ արուարձանը ըլլալու չափ մօտ տեղի մը մէջ Թիւրքական վայրագութեան այս արտայայտութիւնը արդէն յայտնի նշան մը կրնայ համարել Թիւրքական մտայնութեան որքան լարուած ըլլալուն:

Աղէտի մանրամասնութիւնները տակաւին չեն ճշդուած, սակայն պատրիարքարանի կողմէ ղրկուած ներկայացուցիչներէն հասած նամակներ բաւական կը լուսաբանեն խնդիրը:

Ինչպէս յայտնի է, մասնաւորապէս հայերը այնտեղ բուլգարասէր նկատուեցան պատերազմին սկիզբէն ի վեր, վասնզի, բուլգար բանակը մասնաւորապէս հայերուն նկատմամբ բարեացակամ վերաբերում մը ունեցած էր:

Այս բարեացակամութիւնը Թիւրքերը չարաչար մեկնեցին, և յոյները բուլգարներու հետ թշնամանալէ յետոյ իրենց՝ հայոց դէմ ալ սնուցած ատելութիւնը պոռթկալու համար չարաչար գործածեցին:

Ռոդոսթոյի առաջնորդ Գէորգ վ. Արսլանեան, յոյն և բուլգար յարաբերութեանց մէջ պառակտում առաջ գալէն յետոյ զգալով որ յոյները քսու դեր մը կը կատարեն, կուզէ ապագայ աղէտի մը առաջքն առնել:

Լոնդոնի հաշտութեան դաշնագրին համաձայն՝ որոշուած էր Ռոդոսթո, Չօրլու, Հայրապօլ և Մալգարա հայաբնակ քաղաքները վերադարձնել Թիւրքիոյ:

Արսլանեան վարդ. աչքի առջև ունենալով Լոնդոնի հաշտութեան դաշնագրին մէջ Հռոտոսի և Իտալիոյ կողմէն գրաւուած ուրիշ կղզիներու բնակչութեան համար սուլթանին կողմէ ընդհանուր ներումի իրադէ մը հրատարակել պայման դրուած ըլլալը, մէկուկէս ամիս, անձնական առողջութեան պատրուակին տակ, կը մեկնի Սօֆիա և հոն պետական պաշտօնատարներու մօտ դիմում կատարելով՝ կուզէ որ յանձման գործողութիւնը կատարուած ատեն այս տեսակ ապահովութիւն մը ստացուի տեղական ժողովուրդներու համար:

Այս թելադրութիւնը սիրով կընդունուի բուլգար կառավարութեան կողմէ: Գէորգ վարդապետ Արսլանեան այս ապահովութիւնը ստանալէ յետոյ կը դառնայ կուգայ Կ. Պոլիս՝ հոս ալ հարկ եղած դիմումը օսմ. կառավարութեան մօտ կատարելու համար: Նախ Արշարունի պատրիարքին և ապա վարչութեան կը ներկայանայ և կը պարզէ կացութիւնը:

Վարչութիւնը կառավարութեան մօտ կը կատարէ այս դիմումը կարելի եղած փափկանկատութիւնները ի գործ դնելով, վասնզի ծանր բան էր կառավարութեան առանց փաստ մը ունենալու ըսել, թէ «քու զինուորդ ջարդ պիտի ընէ»:

Սակայն այս դիմումը կատարուած պահուն իսկ Թիւրք բանակը կը մտնէր Ռոդոստօ, օգտուելով դէպքերու գահավէժ ընթացքէն և Բալկանի եղբայրասպան կռիւէն: [illegible] դոստո կը մտնէ երբ պատերազմիկ ու յաղթական բանակ, և հետևաբար յատուկ պրոտոկոլով յանձնում չի կատարուիր՝ հակառակ բուլգարներու փափագին:

Բանակէն առաջ հոն կը հասնի յատուկ կառավարական շոգենաւով կամաւորի ձևին տակ Մարմարայի հանդիպակաց եզերքէն բերուած խուժան մը, որ ջարդ կընէ, մասնաւորապէս յունաց և տեղացի իսլամներուն ցուցումներուն վրայ:

Հայերը, բարեբաղդաբար կռահելով կացութեան ծանրակշիռ հանգամանքը, հակառակ անոր որ բոլորովին զուրկ չէին ինքնապաշտպանութեան միջոցներէն, չեն դիմեր զէնքի, նկատի առնելով թէ կանոնաւոր բա- [illegible] ցամաքէն առաջ բանակէն ուղղուած թընդանօթներուն դիմադրելու երբէք կարելիութիւն չկայ: Ընդհակառակը անոնք իրենց անձը պահպանելու համար փութացին ապաստանիլ հիւպատոսարանները և օտարահպատակ հայոց տուները:

Անգլիական հիւպատոսը մասնաւորապէս մեծ մարդասիրութիւն ցոյց տուած է և մեծ աշխատութիւն հայոց կեանքը ազատելու համար: Իր անդրանիկ աղջիկը Կ. Պոլիս ղրկած է և անգլիական դեսպանատուն լուր հասուցած է: Անգլիական երկրորդ պահականաւը՝ «Իմօջէն» անմիջապէս փութացած է Ռոդոստօ: Անոր հետևած են ռուսական և գերմանական մարտանաւերը:

Քաղաքին մէջ հիմա խաղաղութիւնը հաստատուած է:

Պատրիարքարանին դիմումներուն՝ Կ. Պոլսոյ մէջ կառավարութիւնը երկար ատեն ձգձգողական պատասխաններ տալէ յետոյ և շարունակ յայտարարելէ վերջը, թէ ոևէ տեղեկութիւն չէ ստացած, երէկ, յանկարծ, անպատկառութեամբ մը և զարմանալի յանդգնութեամբ մը պատասխանեց, թէ ժողովուրդէն ոչ ոք վնասուած է և ընդամենը զինեալ դիմադրութիւն ըրած ըլլալնուն համար սպաննուած են 6 հայ ժանդարմ, որոնք բուլգարական ծառայութեան մտած էին:

Այս սուտը միայն 4 ժամ ապրեցաւ. սակայն, վասն զի պատրիարքական փոխանորդ Երուանդ վարդապետ Փերտահճեան և Միհրդատ Հայկազն հոն հասած ըլլալով կրցած էին Կ. Պոլիս հասցնել երեք տեղեկագիրներ, *), որոնցմէ կը հասկցուի, թէ ժանդարմներու ընդդիմութեան փորձը առասպել մըն է՝ յօրինուած Կ. Պոլսոյ մէջ, և, ընդհակառակը, կառավարական կարգադրութեամբ և մարտանաւով խուժան փոխադրուած է Ռոդոստօ, հայ ջարդելու համար:

Տակաւին արդեօք Եւրոպայի մէջ կա՞ն մարդիկ, որ հաւատք ունենան Թիւրք կառավարութեան պարկեշտութեան վրայ, կառավարութեան մը, որ կը սուտէ բացարձակ, առանց վարանման, առանց քաշուելու՝ գործուած աններելի ոճիրի մը համար, որ նոյն իսկ Կ. Պոլսոյ արուարձանի մը մէջ կատարուած է:

Ասիկա կառավարութիւն չէ, այլ խայտառակութիւն, որ կը զարմանայ մարդ թէ ի՛նչպէս դեռ կապրի, կամ կը թողուն, որ ապրի:

Շառայլ

Ց. Գ.—Ի վերջոյ պարտք կը համարիմ յայտնել, որ յուլիս 5 թուակիր թղթակցութիւնս (տես «Մշակ» № 151), որ նուիրուած էր յատկապէս Ռոդոստոյի դէպքին, թիւրիմացութեան արդիւնք է, հետևաբար և սխալ: Թիւրք կառավարութեան պաշտօնական անպատկառութիւնը այնպիսի անհաւատալի չափերու կը հասնի, որ չի քաշուիր մայրաքաղաքէն միմիայն երեք ժամ հեռու գտնուող քաղաքի մը մէջ պատահած դէպքերու մասին անգամ ամենացած կերպով սուտ պաշտօնապէս: Շ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(«Пр. Кр.» թերթի Կ. Պօլսի թղթակցի յօդուածը)

Հայկական հարցը, կարծես, մտնում է իր զարգացման վերջին շրջանը: Որպէսզի ընթերցողի համար պարզ լինի, ես անհրաժեշտ եմ համարում նախապէս առաջ բերել հարցի պատմութեան համառօտ տեսութիւնը:

Հայկական հարցը առաջին անգամ առաջ բերեց ռուսական կառավարութիւնը: Ռուսաստանը Հայաստանի մի մասը օսմանեան լուծից ազատելուց յետոյ՝ սկսեց հոգ տանել մնացած հայերի մասին, որոնց նա ստիպված էր թողնել Թիւրքաց իշխանութեան տակ, և նա Սան-Ստեֆանոյի դաշնագրի մէջ մտցրեց 16-րդ յօդուածը, որով [illegible] թեամբ պարտաւորվում էր մտցնել Հայաստանում անհրաժեշտ բարենորոգումները և պահպանել հայերի կեանքը քիւրդերի և չերքէզների յարձակումներից: Ի շնորհս Անգլիայի միջամտութեան՝ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը փոփոխութիւնների ենթարկվեց Բեռլինի կոնգրէսում: Դաշնագրի 16-րդ յօդուածը փոխվեց նշանաւոր 61-րդ յօդուածի, որով Հայաստանի բաղդն ու բարենորոգումները ոչ թէ միայն Ռուսաստանի և միայն նրա երաշխաւորութեան վրա մնացին, այլ բոլոր վեց մեծ եւրոպական պետութիւնների, և գլխաւորապէս՝ գործնականապէս Անգլիայի:

Ինչպէս յայտնի է, Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը մինչև օրս մնում է մեռած տառ:

1895 թ. հայկական ապստամբութիւնը և Սասունի գազանութիւնները հայկական հարցը հերթական դարձրին երկրորդ անգամ: Այդ ժամանակ արդէն նոյնիսկ Անգլիան է, որ առաջարկում է պետութիւններին իրագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը: Մեծ-բրիտանական, ֆրանսիական և ռուսաց դեսպանները Պօլսում Կ. ուսումնասիրում են հայկական հարցը և պատրաստում են բարենորոգումների ծրագիրը (մայիսեան ծրագիր), որ առաջարկում են սուլթանին: Սակայն Անգլիայի և Ռուսաստանի միջև գոյութիւն ունեցող լարված յարաբերութիւնները և մանաւանդ Գերմանիայի թիւրքամոլ քաղաքականութիւնն արին այն, որ այդ ծրագիրը ծրագիր էլ մնաց, և չը կարողացան կանգնեցնել Հայաստանում 1895—6 թ. թ. գազանութիւնները:

Ռուսաստանն անգործ մնաց. նա որոշեց թողնել հայերին իրանց բաղդին. դա Լոբանով-Ռոստովսկիի քաղաքականութիւնն էր:

Այդ ժամանակից սկսած Գերմանիայի թիւրքամոլ քաղաքականութիւնն սկսեց աւելի և աւելի ծաղկել Կ. Պօլսում և Բեռլինին տալ իր պտուղները: Բաղդադի երկաթուղու առանձնաշնորհումը, Կ. Պօլսի տրամվայը, Գերմանիայից դէպի Թիւրքիա ապրանքների մեծաքանակ ներմուծումը, Փոքր-Ասիայում գերմանական գաղութների առաջ գալը և այլն—ահա այն բարեյաջող հետևանքները, որոնց հասաւ Գերմանիան ի շնորհս իր թիւրքամոլ քաղաքականութեան: Ռուսաստանն ու Անգլիան նախանձով էին նայում Բեռլինի յաղթութիւններին: Պատճառներից մէկն էլ այդ եղաւ, որ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան իրար մօտեցան ընդդէմ Գերմանիայի:

Անգլօ-ֆրանսա-ռուսական մերձեցումը օգտակար եղաւ հայկական հարցի համար:

—

XVIII դարից սկսած հայերը յանձին Ռուսաստանի տեսնում էին իրանց բնական պաշտպանին: Նա ազատեց Կովկասը և Հայաստանի մի մասը թիւրքական լծից: Անգլիական քաղաքականութիւնը կարող էր առ ժամանակ հեռու պահել հայերի ուշադրութիւնը Ռուսաստանից, դրդել նրանց յանձնելու իրանց վիճակի հոգատարութիւնը անգլիացիների ձեռքը, որոնցից տառապեալ անատոլցիները սպասում էին աւելի արագ և աւելի արմատական օգնութիւն: Սակայն անգլիական արագ օգնութեան յոյսերն ի դերև ելան, և այժմս չը կայ մի հայ, որ այդ մտքով մոլորված լինի: Բոլոր հայերը—ինչպէս առաջադիմականները, նոյնպէս էլ պահպանողականները—նորից իրանց հայեացքն ուղղում են դէպի Ռուսաստան:

---

*) Այս տեղեկագիրները լոյս կը ընծայենք «Մշակի» վաղվայ համարում: Խմբ.

Ռուսաստանն էլ հայկական հարցի նկատմամբ փոխեց իր վերաբերմունքը: Նա, ըստ երևոյթին, վերադառնում է դէպի հին աւանդութիւնները: Մոռացութեան տալով Լօբանօվ-Ռոստովսկիի քաղաքականութիւնը՝ Ռուսաստանը ճանաչեց հայերին իր հաւատարիմ բարեկամները, որոնք կարող են աջողութեամբ ծառայել ռուսական շահերին Հայաստանում, Փոքր-Ասիայում՝ մինչև Միջերկրական ծովը, Կիլիկիայում: Բալկանեան նիզակակցութեան Թիւրքիայի դէմ ունեցած պատերազմի ժամանակ լուր տարածվեց, թէ Ռուսաստանն իր ձեռքը կառնէ հայկական հարցը՝ այս անգամ վճռական կերպով՝ և կառաջարկէ Լօնդօնի դեսպանախորհրդի քննութեանը: Կազմվեց հայկական երկու խորհուրդ—մէկը Լօնդօնում, միւսը Կ. Պոլսում, ուշադրութեամբ դէպքերի հետևելու, կոչերով եւրօպական պետութիւններին դիմելու, նրանց Հայաստանի համար ցանկալի բարենորոգումների ծրագիրը ներկայացնելու:

Լօնդօնի խորհուրդը, որի նախագահն է Պօղոս Նուպար-փաշան, Եգիպտոսի պետական նշանաւոր գործիչ Նուպար-փաշայի որդին, գործում է Կաթողիկոսի հրահանգներով: Կ. Պոլսի խորհուրդը, որի նախագահն է Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը, ընտրվում է Թիւրքիայի հայոց ազգային ժողովից և հպատակվում է այդ ժողովին:

Լօնդօնի և Կ. Պոլսի խորհուրդների փոխադարձ համաձայնութեամբ պետութիւններին ներկայացված բարենորոգումների ծրագիրն իր մէջ պարունակում է հետևեալ գլխաւոր կէտերը:

1) Հայաբնակ վեց վիլայէթները միացնել մի հայկական վիլայէթի:

2) Նշանակել այդ վիլայէթում բարձրագոյն կոմիսար եւրօպացի՝ սուլթանի կողմից պետութիւնների հաճութեամբ:

3) Սահմանել եւրօպական մշտական վերահսկողութիւն նրա վրա:

[illegible] կան ժողովներ, որոնք կազմված լինեն հաւասար թւով հայ և մահմեդական անդամներից:

5) Կազմակերպել տեղական ժանդարմերիա եւրօպական հրահանգիչներով, կազմակերպել նոր դատարաններ և այլն:

6) Ճանաչել հայկական լեզուն պաշտօնական՝ թիւրքականի հաւասար: Ռ. Ս.

(Վերջը միւս անգամ)

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՌԷՖՕՐՄՆԵՐԸ*)

V

Մեր յօդուածի նախորդ գլուխներում ասացինք, որ ռէֆօրմները Թիւրքիային ամենևին ձեռնտու չեն, և թւեցինք պատճառները:

Բայց, բացի մեր թւածից, կան և ուրիշ պատճառներ:

Հիմնվելով այն փաստի վրա, որ անցեալ դարի առաջին քառորդից սկսած՝ Թիւրքիան ենթարկվել է պարբերական անդամահատութեան և նրա երէկվայ բոյները անկախ պետութիւններ կազմելով՝ այսօր ջախջախում են նրան աջից ու ձախից, մենք ակամայ գալիս ենք այն եզրակացութեան, որ օսմ. պետութիւնը արդէն քայքայման շեմքի վրա է, որ նրա անկումը ժամանակի խնդիր է միայն:

Առ երևոյթս այս այսպէս լինելով հանդերձ, այնու ամենայնիւ Թիւրքիան չէ կորցրել իր յոյսը. ընդհակառակը՝ նա յոյս ունի, որ կրկին ինքը պիտի վերածնի՝ կազմելով մեծ և ուժեղ մահմեդական կայսրութիւն:

Ուրիշ բան է յուսալ և ձեռքերը ծալած նստել ամեն ինչ թողնելով հանգամանքների բնական բերմունքին, որպէս արել է հայը տասնեակ տարիների ընթացքում և բազմաթիւ յուսախաբութիւններից յետոյ. ուրիշ բան է յուսալ և միևնոյն ժամանակ չը դադարել գործելուց, ստեղծելու, առաջ բերելու համար այնպիսի հանգամանքներ, որոնք կոչված լինէին յոյսերն արդարացնելու:

Ռուս-թիւրքական պատերազմը Թիւրքիային բերեց այն համոզման, որ ինքը շուտ կամ ուշ զրկվելու է իր եւրօպական ըստացուածքից, դառնալով զուտ ասիական պետութիւն, երբ ճակատագրականօրէն գործ է ունենալու իր անւոր դրացու՝ Ռուսաստանի հետ: Թիւրքիան չէր կարող մոռանալ այն հարուածները, որ խսպար հասցրել էր իրան քայքայման շեմքին:

Օգտվելով Թիւրքիայի գրգռված տրամադրութիւնից դէպի Ռուսաստանը, Անգլիան ու Գերմանիան էլ, սրտացաւ բարեկամի դիմակ ծածկած, ոչ միայն աւելի ևս գրգռում էին Թիւրքիային Ռուսաստանի դէմ, այլ և ըստ հարկին խորհուրդներ ու միջոցներ էին տալիս Ռուսաստանի ոտնձգութիւնների դէմ կռւելու համար:

Պէտք է ասել, որ մինչև ռուս-թիւրքական պատերազմը Անգլիան ու Գերմանիան այնքան էլ նշանաւոր շահեր չունէին Ռուսաստանին սահմանակից Ասիական Թիւրքիայի վիլայէթներում, և նրանց վախը այն չէր, որ նա կարող էր գրաւել յիշեալ վիլայէթները, այլ այն, որ նա՝ Ռուսաստանը կարող է այդպիսով ճամբայ բանալ իր համար դէպի Միջերկրական ծովը:

Իսկապէս Թիւրքիայի բաժանման էն ցաւոտ կողմն այն է, որ Ռուսաստանը, ի՛նչ գնով ուզում է լինի, իրա համար ճամբայ պիտի բանայ դէպի Միջերկրական ծովը, լինի այդ թիւրքական երկու նշանաւոր նե- [illegible] Ասիական Թիւրքիայով՝ միևնոյնն է:

Որպէս զի Թիւրքիան կարողանար Ռուսաստանի առաջխաղացութիւնը միանգամայն դադարեցնել, հարկաւոր էր, որ նա բաւականաչափ ուժեղ լինէր. իսկ ուժեղ լինելու համար հարկաւոր էր, որ Պարսկաստանը միանար Թիւրքիայի հետ:

Այստեղից արդէն սկիզբն է առնում պանիսլամական գաղափարը: Այս գաղափարը, ինչպէս տեսնում էք, նոր չէ. այդ միտքը, ինչպէս հաւատացնում էին Կ. Պոլսի հեղինակաւոր անձինք, առաջին անգամ յղացել է Վիլհէլմ կայսրը, և այն՝ ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, որը ուղղված էր մի կողմից՝ Ռուսաստանի, միւս կողմից Անգլիայի և Ֆրանսիայի դէմ:

Ի զուր չէր Համիդի և Վիլհէլմի եղբայրակցութիւնը և ջերմ համբոյրները, ոչ էլ այն, որ ամբողջ մուսուլման աշխարհը Վիլհէլմին համարում էր մահմեդականութեան հզօր պաշտպանը:

Մեծ պետութիւնները դեռ այն ժամանակվանից Թիւրքիայի վրա նայում են իբրև մի համեղ որսի վրա: Եւ իւրաքանչիւրը մտածում է այդ որսի պատառ-պատառ անելու գործողութիւնը կատարել այն ժամանակ, երբ ինքն էլ հնարաւորութիւն կունենայ առատ բաժին ստանալու: Ռուսաստանը սահմանակից էր և հեղինակը Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածի. Ֆրանսիան ու Անգլիան կարող էին շահերի հարց բարձրացնել, որովհետև Ասիական Թիւրքիայի առևտրական շուկան կենդանի էր նրանց արտադրութիւններով. Գերմանիան, որ տիրապետում էր Կ. Պոլսի և շրջակայքի շուկային, բայց ոչ Ասիական Թիւրքիայում շահերի հարց չէր կարող բարձրացնել, ստիպված էր Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանել, մինչև որ իր շահերն էլ այնքան հասունանային, որ իրաւունք տային իրան Թիւրքիայի ժառանգներից մէկը հանդիսանալու:

Գերմանիայի հեռաւոր նպատակներին նպաստում էր Ռուսաստանի և Անգլիայի միջև գոյութիւն ունեցող անվստահութիւնն ու պայքարը: Կասկածոտ սուլթան Համիդը աւելի հաւատում էր Գերմանիային այն պատճառով, որ սա ագրեսիվ շահեր չունէր և պաշտպանում էր Թիւրքիայի շահերը միանալով Ռուսաստանի հետ՝ Անգլիայի [illegible] Ռուսաստանի դէմ:

Եւ որպէս վարձատրութիւն իր պատուաւոր մակլերութեան, Գերմանիան զանազան կօնցեսիաներ էր ստանում Թիւրքիայից:

Ա. Յ. Մուրադեան

Սամարղանդ

---

*) Տես «Մշակ» № 154.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 յուլիսի

Բէլգրադ.—Պրէսս-Բիւրօն հաղորդում է. «Յուլիսի 15-ին բօլգարները գրոհ տուին սերբերի դիրքերի Եգրիպալանկիին մօտիկ այն կէտի վրա, ուր միանում են սերբիական, հին թիւրքական և բօլգարական սահմանները: Յարձակումը յետ է մղված: Սերբիական զօրքերը վերադարձան իրանց դիրքերը, ցրելով թշնամուն: Նոյնպիսի անաջող յարձակում գործեցին բօլգարները նաև Վլասինում»:

—

Սօֆիա.—Յուլիսի 14-ին ամբողջ ճակատամասի վրա ոչ մի լուրջ կռիւ սերբերի հետ չէ պատահել: Յոյները խոշոր ույժերով դիմեցին բօլգարների ձախ թևի վրա, բայց հակայարձակման հանդիպելով յետ նահանջեցին, կորցնելով 2 թնդանօթ և մի գնդակացիր:

—

Ալժէսը.—Երկու օրվայ կռւից յետոյ Սիմուլիի մօտից բօլգարները ստիպվեցին նահանջել դէպի Ջումայի: Այդպիսով ձախ թևի վրա թշնամին բոլորովին ջարդված է:

—

Աթէնք.—Աթէնական գործակալութիւնը հերքում է Եւրօպայում տարածված այն լուրը, թէ Յունաստանի և Թիւրքիայի միջև համաձայնութիւն է կայացել Բօլգարիայի դէմ միասին գործելու համար:

Բօլգարական զօրքերը հեռանալով Քսանթիից տարան իրանց հետ յունական 40 նոտաբլներ և Քսանթիի միտրօպօլիտին իբրև պատանդ:

Թագաւորը մերժեց բօլգարական առաջարկը երեք օրվայ զինադադարի մասին: Մերժումը արված է ռազմական դիտումներով:

—

Սօֆիա.—Ֆրանսիական գաղութի ներկայացուցիչները ֆրանսիական մամուլի օրգաններին ուղարկված հեռագիրներով բողոքում են բօլգարական զինւորների վարմունքի առիթով Աթէնքից և Բէլգրադից հաղորդված սուտ լուրերի դէմ:

—

Բուխարէստ.—Բօլգարական պատգամաւորներից մէկը, «Ունիվերսալ» թերթի աշխատակցի հետ խօսելիս, ասել է. «Մենք ի բոլոր սրտէ զիջում ենք ձեզ պահանջվող շրջանը, առաջարկում ենք մեր բարեկամութիւնը, ցաւում ենք մեր նախկին կառավարութեան յամառութեան համար: Ռուսասէր Դանէվը գործելու ազատութիւնից զրկված էր: Մեզ հրահանգ է տրված չը յամառելու: Այդ չէ նշանակում, որ մենք պէտք է զիջենք Սերբիայի չափազանցացրած պահանջներին: Բօլգարիան համաձայնութիւն չի կայացնի, եթէ նրա նախկին դաշնակիցները դժուարութիւններ կը ստեղծեն թիւրքերի կողմից այժմ գրաւած նրա հողային շրջանները վերադարձնելու հարցում»:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 յուլիսի

Կ. Պոլիս.—Գահաժառանգ Իւսուֆ Իզզէդդինը և Զիաէդդին պրինցը վաղը ուղևորվում են Ադրիանուպոլիս: Տիեզերական պատրիարքը երեք միտրօպօլիտներով այցելեց մեծ վեզիրին:

—

Կ. Պոլիս.—Թիւրք կառավարութիւնը շտապով վերադարձնում է մահմեդական փախստականներին Թրակիա, տեղափոխելով նրանց Րոդոստօ, որտեղից յետոյ նրանք ոտքով գնում են իրանց գիւղերը:

Տիեզերական պատրիարքը զեկուցումներ է ստացել, որ թիւրք զօրքերը Չաթալջայից շարժվելով դէպի Ադրիանուպօլիս, կոտորել են 15,000 քրիստոնեաներ, գլխաւորապէս յոյներ: Պատրիարքը մտադիր է բողոքել Բ. Դրանը և օտար պետութիւնների դեսպաններին:

Երիտասարդ-թիւրքական կօմիտէտը միաձայն որոշել է՝ ինչպիսի պարագաներում էլ լինի՝ չը վերադարձնել Ադրիանուպօլիսը, նոյնիսկ այն դէպքում, [illegible] վտանգելու լինի: Զօրքերի ու ռազմամթերքների ուղարկելը Ադրիանուպօլիս շարունակվում է: Պաշտօնական հաղորդագրութիւնների համաձայն թիւրքերը Ադրիանուպօլսում խլել են բօլգարներից 150 թնդանօթ մեծ կալիբրի, ի թիւս որոց 75-ը նախկին թիւրքական, բացի դրանից՝ 50,000 հրացան, 10,000 տոպրակ ալիւր և բազմաթիւ ռազմամթերքներ:

—

Սօֆիա.—Յուլիսի 13-ին թիւրքական հեծելազօրքի մի գունդ փորձ արեց շրջապատել բօլգարական զինւորական պահակակէտը Կիրքիլարում, Կըզըլ Աղաջի շրջանում: Բօլգարները յետ մղեցին երեք անգամ վերսկսված յարձակումը: Սպանված է 20 հոգի: Երկու հեծելագունդ, 50 բաշիբոզուկների հետ միասին ներս խուժեցին բօլգարական Ծօլմօւյեալիմ ամրութիւնը, նոյն շրջանում, բայց յետ մղվեցին: Թիւրքերը հետևակ զօրք իջեցրին Ախտօպօլում, Սև-ծովի վրա:

—

Կ. Պոլիս.—Ռուսական դեսպանը յուլիսի 15-ին առաջադրութիւն արեց մեծ վեզիրին Թրակիայում թիւրքերի գործած անգթութիւնների առիթով և հաւաստիացումներ ստացաւ, որ յանցաւորները խիստ պատիժ կը կրեն: Մեծ պետութիւնների դեսպանները հաւաքական առաջադրութիւն արեցին Բ. Դրանը Ադրիանուպօլսից հեռանալու մասին:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

VI

Պատերազմի չարանենգ աստուածը դարձեալ իր հունձն է անում:

Ալեոր Բալկանների ձիւնածածկ գագաթները նորից թնդում են պատերազմի փողերի ահեղ ձայներից, զէնքերի շաչիւնից, գնդակների սուլոցից և Դանուբի ջրերը նորից ներկվում են մարդկային կարմիր արիւնով:

Սակայն այս անգամ ոչ թշնամու:

Բալկանները շատ են տեսել պատերազմ ու կռիւներ, դարերի ընթացքում նրանց վրա շատ, չափազանց շատ արիւն է թափվել, որպէսզի այդ նորութիւն լինի նրանց համար, և դարերի ընթացքում նրանք երբէք ականատես չեն եղել այնպիսի մի ամօթալի էպօպէայի, ինչպիսին է ներկայիս բալկանեան պատերազմը, որը մարդկութեան պատմութեան մէջ համարեա թէ առաջինն է:

Երբ սկսվեց բալկանեան միացեալ պետութիւնների պատերազմը Թիւրքիայի դէմ, չը նայած որ բալկանեան պետութիւնները ճիգ ու ջանք չէին խնայում ապացուցելու ամբողջ մարդկութեանը, որ այդ պատերազմը մղվում է յանուն իրանց տանջվող քրիստոնեայ եղբայրների ազատութեան, յանուն խաչի ընդդէմ կիսալուսնի, այնու ամենայնիւ ամենքի համար, որոնք կարողանում էին իրերի ընթացքը բաց աչքերով դիտել, առաջին իսկ օրից պարզ էր, որ այդ պատերազմն էլ սովորական պատերազմների նման է, և քրիստոնեայ եղբայրների ազատութիւնը միայն մի պատրուակ է բալկանեան պետութիւնների համար, իրանց գիշատիչ ախորժակի համար մի ոսկեզօծ դիմակ:

Եւ պատմութեան ընթացքը պարզ ապացուցեց այդ:

Երէկվայ բարեկամները այսօր թշնամիներ [illegible] երէկվայ կողք-կողքի կռւող զինւորները այսօր հրացանների սուիններով միմեանց կուրծքերն են ծակոտում. երէկ միմեանց հերոս անւանողները այսօր շներ ու խոզեր են անւանում:

Հնչում են պատերազմի փողերը, հրացանների ու թնդանօթների որոտը աշխարհ է դղրդեցնում, այրված քաղաքների ծուխն ու բոցը դժոխքի սարսափներ է ծնեցնում դժբաղդ Բալկանների մի ծայրից միւսը:

Եղբայրն է եղբօր դէմ կռւում, եղբայրն է եղբօրը յօշոտում՝ մի թիզ հողի համար, մի աւերակ քաղաքի պատճառով:

⁂

Եւ նորից անթիւ զոհեր, անթիւ, անհամար գերեզմաններ:

Գնդակահարված կրծքեր, ջարդված գանգեր, կտրտված ձեռքեր ու ոտքեր և գերեզ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏՆԵՐԻ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ԴԷՊԻ ԹԻՆԱԿԻ

(Նորեր յիշատակարանից)

Աստրախանի էսպերանտիստները վաղուց մտածում էին կատարել մի զբօսանք քաղաքի շրջակայքում. բայց շուտով փոխեցին իրանց որոշումը, երբ առաջարկվեց կազմակերպել մի էքսկուրսիա դէպի Թինակի պրօպագանդայի և Թինակիի հետաքրքրական վայրերը տեսնելու նպատակով:

Այստեղ է գտնվում «Астраханскія грязи» կոչված բուժիչ ցեխը, ուր բժշկվում են յօդացաւով հիւանդացած մարդիկ:

Ահա այդ էքսկուրսիան դէպի Թինակի կատարեցինք յունիսի 16-ին, կիրակի օրը, երբ բոլոր էսպերանտիստները ազատ են լինում զանազան անձնական գործերից:

Էքսկուրսիային մասնակցում էին 13 հոգի էսպերանտիստներ, որոնք հասարակութեան ուշադրութիւնն էին գրաւում իրանց գեղեցիկ կանաչ բանդերով և էսպերանտոյի կանաչ աստղաձև նշանով:

Առաւօտեան ժամը 9-ին բոլորս պատրաստ սպասում էինք շոգենաւի մեկնելուն. վերջապէս շոգենաւը սուլեց երկրորդ անգամ, և մենք հրաժեշտ տալով Աստրախանին ճանապարհվեցինք դէպի Թինակի:

Բոլոր էսպերանտիստներս խօսում ենք բացառապէս էսպերանտո լեզուով, որը առաջացնում է մեծ հետաքրքրութիւն:

Շուտով մեզ շրջապատեց հետաքրքրվողների մի բազմութիւն և տեղաց մեզ վրա մի շարք հարցերի տարափ, որոնց մեծ բաւականութեամբ պատասխանում էինք, միևնոյն ժամանակ ցրվելով պրօպագանդայի թերթիկներ և էժան ինքնուսոյցներ:

Հասարակութիւնը լարված ուշադրութեամբ լսում էր մեր բացատրութիւնները և հաւանութիւն էր տալիս էսպերանտոյի նպատակին ու նրա առաջադիմութեանը:

⁂

Վօլգան այսօր աւելի գեղեցիկ է...

Խաղաղ ու երկնագոյն...

Շոգենաւը պատռելով Վօլգայի հպարտ ու սիգապանծ կուրծքը՝ առաջ էր սլանում արագօրէն, ետևից թողնելով խոր-խոր ակօսներ՝ փրփրած ալեակներ:

Բազմաթիւ ու անհամար ալեակներ, նման փոքրիկ չարաճճիների, միմեանց հրելով ու խեթխեթելով վազում էին դէպի շոգենաւը, կարծես մտնում էին սիրած պապիկի գիրկը, նրա ականջին փսփսում էին իրանց չարութիւններից, ապա բարձրաձայն ծիծաղով ու փնչփնչոցով յետ էին փախչում պապիկի գրկից, հրհռում միմեանց, ցատկոտում այս ու այն կողմ ու մի ոստիւն գործելով հանգստանում էին հիւրընկալող տատիկի՝ Վօլգայի գեղածիծաղ ափերում... Նորից խմբերով մէկ-մէկի առաջ կտրելով յետ էին դառնում, նորից մտնում Պապիկի գիրկը... քչփչում... հրհռում... Եւ այսպէս անվերջ, անդադրում...

Կանաչազարդ ափերի մօտ այս ու այն կողմը ցրված են ձկնորսական փոքրիկ առագաստանաւեր, նման աշխոյժ կարապների, որոնք սլանում են աջ և ձախ՝ կերակուր որսալու:

Եզերքի սաղարթախիտ ծառերից կապված են փոքրիկ նաւակներ. հանգիստ ալեակները կարծես ամաչկոտութեամբ ու վախվխելով մօտենում էին նաւակներին ու մեղմօրէն զարնվում նրանց կողերին:

Զըրըմ՛փ... Շըրը՛փ...

Համբոյրներ էին շռայլում իրանց սիրեցեալին... Նաւակները ամաչկոտ կոյսերի պէս... այրված համբոյրից... հեզօրէն երերվում էին... Նազ անում, ուսները վեր քաշում:

Միւս ափում ձգված է ընդարձակ մարգագետինը տեղ-տեղ շրջապատված գետից խիտ շամբուտներով, ոչխարների խայտաբղէտ խմբերը մուշ-մուշ արածում են հիւթալից խոտը: Գոյնզգոյն, պարզ գիւղական հագուստներով հովուհիները տեսնելով շոգենաւը հանում էին մեծ թաշկինակները և ժպտերես թափահարում էին օդում:

Ահա վերջապէս երևում է Կալմիցկի բազարը, որտեղից Թինակի 5 վերստ է ցամաքային ճանապարհով: Շոգենաւը սկսեց դանդաղօրէն առաջ գնալ և քիչ յետոյ կանգնեց ափի մօտ:

Մենք վերցնելով մեր իրերը իջանք շոգենաւից. այստեղ էլ շոգենաւին սպասող հասարակութեան մէջ ցրեցինք թերթիկներ և, տեղաւորվելով երկու դիլիժանների մէջ, մեր ճանապարհը շարունակեցինք դէպի Թինակի:

Ճանապարհը մերթ ընկնում է Վօլգայի ափով, ուր մարդու լսողութիւնը շոյում են գետի ալիքների քաղցրահնչիւն խշխշոցները, մերթ ոլորապտոյտ անյայտանում է երկարօրէն ձգված ցամաքի մէջ: Մենք բոլորս լաւ տրամադրված ենք, երգում ենք էսպերանտոյի հիմնը և այլ երգեր նոյն լեզուով:

Հեռւում երևում են կանաչ ծառերի խմբակներ, որոնց մէջ թագնված են գեղեցիկ տնակներ, շինված՝ հիւանդների համար:

— Ահա Թինակին, — ճչում են մեր ընկերները:

Նորից մեր դիլիժանսը անցնում է գեղածիծաղ ափերով, խիտ շամբուտների մօտով, նորից անյայտանում է դէպի ցամաքի խորքը և ահա կանգ է առնում...

Վարձատրելով կառապանին մենք վերցրինք մեր իրերը և առաջ անցանք հով ծառուղիներով:

Ընտրելով մի գեղեցիկ վայր՝ ծառերի հովում, այդտեղ հանգստացանք, թէյ խմեցինք և ապա սկսեցինք շրջել, միևնոյն ժամանակ ցրելով հետաքրքիր հասարակութեան մէջ պրօպագանդայի թերթիկներ ու բրօշիւրներ:

Հասարակութիւնը այստեղ աւելի շատ է հետաքրքրվում, շրջապատում է մեզ և տալիս է զանազան հարցեր. շատերը այնքան են ոգևորված, որ խօսք են տալիս շուտով յաճախել էսպերանտոյի երեկոյեան դասընթացքները:

— Ներեցէք, պարոն—հարցնում է մի ծերունի.—կարելի՞ է իմանալ, թէ ի՞նչ նշան է ձեր կրծքին:

— Սա էսպերանտոյի նշան է,—պատասխանում եմ ես:

— Իսկ ի՞նչ բան է էսպերանտոն և ի՞նչ է նրա նպատակը,—հարցնում է նա հետաքրքրութեամբ:

— Էսպերանտոն միջազգային լեզու է, որով խօսում են այժմ աւելի քան երեք միլիօն մարդիկ. նրա նպատակն է, որ բոլոր մարդիկ խօսեն միայն այդ լեզուով, լինեն համերաշխ...

— Իսկ ի՞նչ տառեր են այդ լեզուի գրերը,—կտրում է խօսքս անհամբերութեամբ:

— Գրերը լատինական են, բացառութեամբ մի քանիսի, որոնք ենթարկվել են որոշ փոփոխութեան: Ահա համեցէք այս թերթիկը, որի մէջ դուք աւելի մանրամասնօրէն կը գտնէք գրված էսպերանտոյի նպատակը, նրա նշանակութիւնը, այբուբենն ու քերականութիւնը, որով և կարելի է սովորել էսպերանտո լեզուն:

Տալիս եմ թերթիկը և հեռանում:

— Ներողութիւն, իսկ ինչպէս է էսպերանտո լեզուով «շնորհակալութիւն»,—հարցնում է ծերուկը նորից՝ ինձ յետ կանչելով:

— Dankon,—պատասխանում եմ ես:

— Dankon!?! Դա հօ գերմաներէն է,—հարցնում է նա զարմացած:

— Այո, սրա մէջ կան բառեր շատ լեզուներից, ինչպէս և գերմաներէնից:

— Dankon, dankon...,—պատասխանում է ծերուկը ժպտերես:

Ծառուղիներում քիչ զբօսնելուց յետոյ մենք դիտեցինք հիւանդների համար շինված բարակները, նրանց վաննաները, ուր ընդունում են բուժիչ ցեխը. բարակների ծառայողները մեծ հաճութեամբ ցոյց էին տալիս մեզ համար հետաքրքրական վայրերը և բացատրում էին նրանց նշանակութիւնը:

Այս ու այն կողմ անիւաւոր բազկաթոռների վրա շրջում են հիւանդներ, որոնց նոյնպէս մենք տալիս ենք թերթիկներ:

Քիչ հեռու երևում է մի ընդարձակ վարդագոյն տարածութիւն. արեգի շողերը ընկնելով վրան պէծպէծուն են տալիս միլիօնաւոր բիւրեղանման մարմիններ:

Դա լիճն է, որից հանում են ցեխը: Բազմաթիւ կալմիկ բանւորներ կիսամերկ, մտած լճակի մէջ, բահերով հանում են ցեխը, որը առանձին փոքրիկ վագօններով փոխադրվում է լճակի ափին գտնվող բուժարանը:

Բարակները դիտելուց յետոյ մենք այցելեցինք տեղական եկեղեցին, ուր ներկայ գտնվեցինք ժամերգութեանը և ապա գնացինք Հին-Պարկ կոչված այգին, որ գտնվում է Վօլգայի ափին:

Այգուց քիչ հեռու գտնվում են կալմիկների խրճիթները, և, որպէս հետաքրքրական մաննե՛ր, անթիւ, անհամար գերեզմաննե՛ր, հողի երեսին, անթաղ, անծածկ դիակնե՛ր, դիակնե՛ր։

Անձրևներն են թրջում նրանց, արևն է խանձում, քամիներն են լիզում այդ արիւնաթաթախ թաւալգլոր անթիւ դիակները, որոնք սարսափից լայն բացված իրանց աչքերը դէպի երկինք յառած՝ բողոքում են նրանց դէմ, որոնք պատճառ էին դարձել այդ անթիւ անհամար գերեզմաններին։

Ինչու, ինչ բարձր իդէալի, ինչ վեհ նպատակի համար։

Սլաւօնների յաղթական պատերազմը վերջացել էր. նրանք հասել էին իրանց նպատակին, դարաւոր հսկան—Թիւրքիան—յաղթված՝ իր սուրն էր դրել նրանց ոտքերի տակ. էլ ի՛նչ էին ուզում, ի՛նչ էին ցանկանում։

Սակայն պատերազմի յաղթութեան որոտների հետ միասին եկող շովինիզմը երբէք չի կշտանում. նրան հարկաւոր են նոր յաղթութիւններ, դարնեայ նորանոր պսակներ։

Նա չի ճանաչում, չի տեսնում ոչ ժողովրդի արիւնաքամ վէրքերը և ոչ նրա աղի արցունքները։

Նրան հարկաւոր են նոր զոհեր, նոր գերեզմաններ, դիակների նորանոր կոյտեր իր ցնորամիտ փառքի համար։

* * *

Եւ սակայն այստեղ, ոչ միայն արիւնաքամ վէրքեր են ու աղի արցունքներ, այլ տանջանքների մի հսկայ ովկիանոս, որը ոչ չափ ունի, ոչ սահման։

Միլիօնաւոր աշխատաւոր դասակարգը հեծում ու արիւնաքամ է լինում պատերազմի դաշտում, նրանց որդիները սովամահ լինում քանդված ու այրված գիւղերում ու քաղաքներում, կանայքն ու աղջիկները սովի ճանկերից ազատվելու համար ոսկու հերոսների կրքերին յագուրդ տալու են ծառայում...

Եւ քայքայվում է երկիրը, ծեծվում ժողովուրդը։

Զարմանենգ Մոլոքը իր հունձն է անում։

Վաղարշակ Թումանեան

Բագու

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

15 յուլիսի

Մադրիդ.—Ցամառ լուր է պտտվում, որ իբր Լիսաբոնում լուրջ ապստամբութիւն է։

—

Լիսաբոն.—Յեղափոխութիւն սկսվելու մասին տարածված լուրերը անհիմն են։ Երկրում հանգստութիւն է տիրում։

—

Պրագա.—Չեխական ագրարային կուսակցութեան կոմիտէտը, նաև չեխական առաջադէմ կուսակցութեան կոմիտէտը, որոնց պարագլուխն է Մասարիկը, վճռեց բողոքել Չեխիայում սահմանադրութիւնը դադարեցնելու դէմ։ Չեխական սօցիալ-դեմօկրատները բողոքի միտինգ կազմակերպեցին, պահանջելով ընտրողական բարենորոգումներ դէմօկրատիկ ոգով։ Ոստիկանութիւնը արգելք եղաւ փողոցային ցոյցերին։ Լրագիրները խստիւ քննադատում են կառավարութեան վարմունքը, որ այդ միջոցով մտադիր է ստիպել չեխերին՝ գերմանացիներին հաճելի համաձայնութիւնը ընդունելու։

—

Շանխայ.—Նանկինը ապստամբների ձեռքումն է։ Հասարակական կարծիքը ըստ երևոյթին Իւանշիկայի կողմն է։

—

[illegible]մերիկահպատակներին Մեքսիկայում սպառնացող վտանգը, ամերիկական կառավարութիւնը մեքսիկականին եռանդուն առաջարկութիւն արեց։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

—

Ուստր, 5 յուլիս (ն. տ.)

Ամերիկայի ընդհանուր բնակչութեան համար եթէ կայ տօն մը այնքան սուրբ ու նուիրական, որուն հանդէպ ամեն անհատ յարգանքի ամենաբարձր զգացումը կը տածէ անվերապահօրէն, անիկա յուլիս 4-ի տօնն է, որ ծնունդ տուած է Ամերիկայի անկախութեան յայտարարութեան 1776 թուականին։ Վերոյիշեալ թուականէն ի վեր արդէն մէկ ու կէս դար անցած է, բայց երկրին ժողովուրդը սոյն նշանակելի օրուան պատմութիւնը այնքան մօտէն կը վերյիշէ, որ կարծես դէպքը դեռ երէկ տեղի ունեցած ըլլար։

Յուլիս 4-ը Ամերիկայի մէջ ապրողներուն համար ամենանուիրական օրն է։ Այս տօնը ամէնուրեք կը տօնուի մեծ հանդիսաւորութեամբ։ Շաբաթներ առաջ նախապատրաստութիւններ կը տեսնուին—որքան որ կարելի է—շքեղ ու վայելուչ կերպով տօնելու համար այս օրը, որ 1776 թուականէն ի վեր դարձած է պատմական ու անմոռանալի։

Այս առթիւ կը կազմուին խոշոր թափորներ, այլազան տարրերէ ու ազգութիւններէ բաղկացած, որոնք հանդէս կը բերեն տեսակ-տեսակ շքախումբեր իրենց ազգային դրօշմով և պատմութենէ առնուած օրինակներով։

Տեղւոյս հայ գաղութը՝ առաջին անգամ ըլլալով՝ մաս ունեցաւ այս տարուան քաղաքային մեծ թափորին մէջ։ Քաղաքին կողմէ հրաւէր եկած էր բոլոր ազգութիւններուն յուլիս 4-ի օրուան շքերթին (parade) մասնակցելու իրենց ազգային դրօշակով ու տարազով։ Հայերը, որ ցարդ անմասն մնացած էին այսպիսի տօնական օրերու մէջ, սիրով արձագանգ տուին իրենց եղած հրաւէրին և հանդէս եկան փայլուն ու պատուաբեր հանգամանքով մը։

Հայ գաղութի անդամներէն մօտաւորապէս 250 անձեր թափորին ընկերացան, իսկ օրուան առթիւ յատկապէս շքախումբ մը պատրաստեցին, Արարատ լեռը և նոյեան տապանը ցուցադրող, մէջտեղն ալ Մայր [illegible]։ Շքախումբը այնպիսի կանոնաւորութեամբ ու ճաշակով պատրաստուած էր, որ հիացում պատճառեց թափորը դիտող 50,000-է աւելի հանդիսատես աչքերու։ Տեղական թերթերը գովեստով խօսեցան հայերու այս ցուցադրութեան համար, անուանելով զայն «յաջող յղացում» մը։

Հայկական թափորին կազմը ձգեց խոր տպաւորութիւն ժողովրդեան վրայ, որովհետև իր առջև ունէր հայ զինւորական խումբը, մինչդեռ ուրիշ ազգեր այս փայլէն զրկուած էին։ Այս յայտնի պատճառաւ էր, որ հայերը շատ աւելի ծափեր խլեցին թափորի շրջագայութեան միջոցին, քան ուրիշ ազգեր, չնայած որ անոնցմէ ոմանք անհամեմատօրէն աւելի դրամ ծախսած էին։

Թափորը տևեց մօտաւորապէս երեք ժամ. ուրախ ենք ըսելու, որ այս տեղութեան միջոցին ոչ մի անկարգութիւն չպատահեցաւ, շնորհիւ կարգադիր յանձնախմբի դիւանի անդամներուն (պ. պ. Մաղաք Գ. Պէրպէրեան և Տիգրան Եքմեքճեան), որոնք երկարաշունչ աշխատութեամբ մը ամեն բան լաւ կազմակերպած էին, որպէսզի ոչ մի անախորժ դիպուածի առիթ չտեղծուի։

Արարատ լեռը բնականօրէն պատրաստողն ու հանդէս բերողն եղաւ պ. Մարտիրոս Մելիքեան (Զախմախ), որ այսպիսի աշխատութեանց համար բնատուր ձիրքով մը օժտուած է։

Հայկական թափորին թողած տպաւորութիւնը գաղութիս անդամներուն վրայ նոյնպէս լաւ էր, այնպէս որ հիմակուընէ փափագ կը յայտնուի յաջորդ տարի ալ աւելի փայլուն շքախումբով մը և խոշոր պատրաստութեամբ մասնակցիլ քաղաքային շքերթին։

Մաղաք Գ. Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Տ. Նազարեանի նախագահութեամբ թիֆլիսաբնակ ղարաբաղցիները ուղերձ են պատրաստում իրանց ծննդավայր Ղարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ յօբելեանին մատուցանելու յատուկ պատգամաւորութեան ձեռքով։ Ուղերձը գեղանկար է լինելու։ Բացի այդ ուղերձից, մատուցվելու է և յօբելեանի նախագահող թեմի առաջնորդ հ. Ջալէն և նրան աջակից սինօդի անդամ հ. Բաբգէն վարդապետներին յարգանքի առհաւատչեաներ։ Թիֆլիսաբնակ ղարաբաղցիները, որոնք կամենում են մասնակցել, հրաւիրվում են ուրբաթ, ամսիս 19-ին, երեկոյեան 6—10 ժամին շնորհ բերել Գրական-Գեղարւեստական Սալօնը և ստորագրել ուղերձին, իսկ այնուհետև ցերեկները Սերգէյ Կաֆեանի վաճառանոցում կարելի է ստորագրել։ Ամարանոցում գտնվող թիֆլիսաբնակները իրանց ցանկութիւնը մինչև օգոստոսի 1-ը կարող են յայտնել գրաւոր պ. պ. Տ. Նազարեանին կամ Սերգէյ Կաֆեանին»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սուրամի ծխ. դպրոցի 50-ամեակը

Սուրամ, 10 յուլիսի

Ամսիս 21-ին կայանալու է տեղիս ծխ. դպրոցի 50-ամեայ յօբելեանական հանդէսը։

Առանձին ոգևորութեամբ յօբելեանական յանձնաժողովը աշխատում է որքան կարելի է շքեղ անցկացնել յօբելեանական հանդէսը։ [illegible] որը պէտք է հետևի հանդէսին և առանձին շքեղութիւն տայ։ Յանձնաժողովին մասնակցում է թէ տեղական և թէ ամարանոց եկող ինտելիգենցիան։

Ա. Մայիլեանը հրաւիրված է հանդէսի առթիւ քառաձայն խումբ պատրաստելու։ Փորձերը վաղուց սկսվել են և բաւականին մխիթարական են։ Գովելի է պարոնի եռանդը։

Յուսով ենք, որ յօբելեանական յանձնաժողովը յաճախող հասարակութեանը մեծ բաւականութիւն կը տայ։ Գ. Մ.

—

Բուղաքարցին վտարված իր բնակավայրից

Մեղրի, 3 յուլիսի

Մեղրիի ամարանոց Լիշկվազին սահմանակից Ալագեազ սարի ստորոտում գտնվող մի հինաւուրց թուրքական Բուղաքար անունով ուխտատեղ կայ։

Տարիների ընթացքում, առանց կառավարութեան օրինական թոյլտւութեան, Ղափանի գիւղերից զանազան անձինք եկել այդտեղ մի թուրքական գաղթավայր-աւուլ էին հիմնել։ Ժամանակին Մեղրիի հասարակութեան կողմից մի քանի անգամ գանգատ գնաց ուր հարկն է, թոյլ չը տալու այդտեղ բնակութիւն հաստատելու։ Այդ վայրը մի կուսական անտառախիտ վայր էր, որը եթէ կանօնաւոր շահագործվէր, մի մշտական եկամտի աղբիւր պիտի ծառայէր գանձարանին։ Մեղրեցիների այդ գանգատները սակայն անուշադիր մնացին։

Անտառապետութեան ստորադրեալ ժամանակի թոյլ, անպարտաճանաչ, ժողովրդի փէշքէշներով գնված անտառապահների շնորհիւ, կացինը, տգէտ ժողովրդի ձեռքերով, այդ վայրի կուսական անտառի մեծ մասը [illegible] է դարձրել և նրա տեղը վերածել ցորնարտ վարելահողերի։ Նրանք մինչև անգամ մեծ տարածութեամբ կտրատել-ոչնչացրել են մեղրեցիների հողաբաժին Լիշկվազի Նօվլու Չէլմա մասի անտառից։ Այդ մասին էլ մեղրեցիների ժամանակի բողոքները մնացին «ձայն բարբառոյ յանապատի»։ Այդ ժամանակից անցել են 25—30 տարիներ, և այդ վայրում 14—20 ծխից բաղկացած մի թուրքական աւուլ է հիմնվել։ Նրանք տարիներ շարունակ մատակարարել են Մեղրիի, Օրդուբաթ քաղաքի և Ագուլիսի շրջանի բընակչութեան սպառող ածուխը։

Բուղաքարցիները վերջերս խնդիր են առաջարկում ուր հարկն է, իրանց այդ վայրում հաստատելու և առանձին հարկի ակլադ ուղարկելու։ Այդ խնդրին հետևում է Հին-Նախիջևանի անտառապետ Արխիպօվի անաչառ ու խիստ դօկլադը։

Կառավարութեան որոշմամբ հրամայվում է բուղաքարցիներին անյապաղ դուրս քշել իրանց բնակած վայրից։ Եւ ահա օրերումս անտառապետը իր անտառապահներով, Զանգեզուրի 4-րդ մասի պօլիցիական պրիստաւը իր ստրաժնիկներով եկան Բուղաքար և կառավարական հրամանն ի կատար ածեցին։ Բնակիչները, թողնելով իրանց տարիների ընթացքում շինած տները, աճեցրած պտղատու ծառերի պլանտացիաները, անտառի տեղ վարելահողերն ու տընտեսութիւնը, լաց ու կոծով, ցրվելով գնացին իրանց նախկին հասարակութիւնների մէջ ապրելու։ Այնտեղ ժամանակաւորապէս մնացել են միայն երկու տուն, տարվայ եկամուտները վերցնելու։ Հրամայված է եղել և տները քանդել, աւերել, բայց վերջին հրամանը անկատար է թողնվել։

Այդ աւուլի բնակիչները պարապում էին ածխագործութեամբ, անասնաբուծութեամբ և մասամբ երկրագործութեամբ։ Նրանք [illegible]ւական ապահովված գիւղացիներ էին դառել։

Արդեօք այդ բոլորից յետոյ մնացած անտառը այսուհետև ազատ կը մնա՞յ անխնայ փչացումից, թէ էլի նորից կը վերադառնան և աւելի խրախուսված կը սկսեն մնացորդ անտառն էլ բոլորովին անհետացնել։ Սպասենք և տեսնենք։

Այդ բոլորից յետոյ հարց է ծագում, թէ ո՞վ է մեղաւոր այդ բանում, բուղաքարցի՞ք թէ՞ անտառապետութիւնը իր ժամանակի անպարտաճանաչ ստորադրեալներով։

Ե. Վարդանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի փոխարքան դիմել է ինֆանտերիայի գեներալ Ն. Պ. Շատիլօվին հետևեալ հեռագրով. «Թագաւոր Կայսրին ուղղած իմ ամենահպատակ հեռագրին՝ ինձ ուղարկված ուղերձին ստորագրող անձանց կողմից Կովկասի ազգաբնակութեան անունից արտայայտված հաւատարիմ հպատակութեան զգացմունքների մասին, Նորին Մեծութեանը հաճելի էր ամենաողորմածաբար պատասխանելու Պետերհօֆից հետևեալ Բարձրագոյն հեռագրով. «Խնդրում եմ ձեզ, կոմս, շնորհակալութիւն յայտնել իմ անունից այն բոլորին, որոնք ուղերձով դիմել են ձեզ Թիֆլիսում պօլիտեխնիկական ինստիտուտ հիմնելու առիթով. ՆԻԿՈԼԱՅ»։ Գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցով-Դաշկով։ («Кавк.»)։

◆ Մենք հաղորդել էինք այն ճանապարհորդութեան մասին, որ անում է երկրագործութեան մինիստրի լիազօր Շաշկօվսկին Երևանեան նահանգում։ Նա արդէն այցելել է Երևանի գաւառը և բարձրացել Նոր-Բայազէտի բարձրաւանդակի վրա։ Ամսի 14-ին Դարաչիչագից Սևանայ լճի մօտով նա անցել է Դիլիջանի ձորը և երեկոյեան հասել Ղարաքիլիսա։ Ամսի 15-ին նա ուղևորվել է դէպի Ալէքսանդրօպօլ, որտեղից կը գնայ դէպի Արագած՝ այցելելու նրա արօտների մի մասը Հաւէջի վանքի շրջաններին մօտ։ Արագածից վերադառնալուց յետոյ Շաշկօվսկին կուղևորվի Կարս և Արդահան։

◆ Քաղաքային ջրմուղի մասի կառավարիչ ինժեներ Գ. Ջ. Կուրդիանին աւարտել է իր հետազօտական աշխատանքները Արագվա գետից ջուր անցկացնելու Թիֆլիսի քաղաքային արօտատեղերը ոռոգելու նպատակով։ Պարզվել է, որ այդ ջուրը կարող է ինքնիրան հասել պատրաստվելիք առուով։ Ճանապարհին գտնվել են աւազանների մնացորդներ և հետքեր Թամարա թագուհու հին առուի, որով երբեմն ոռոգվելիս են եղել Կուկիայի, Հալաբարի քաղաքային հողերը մինչև Նաւթլուղում գտնվող նախկին Վօրոնցովեան փիրման։ Առուի պատրաստելը մօտաւոր հաշւով կը պահանջէ 600,000 ռ.։ Հետազօտութիւնները շարունակվում են։

◆ Յուլիսի 15-ի երեկոյեան բացվել են Թիֆլիսի Վրաց Գիւղատն. Ընկ. կազմակերպած կօօպերացիայի դասընթացները։ Օտար քաղաքներից հրաւիրված դասախօսներից եկել է արդէն Ա. Ս. Օրլօվը. սպասվում է Ա. Ա. Եվդօկիմօվը։ Դասախօսութիւնը լսելու 40 գրվածներից եկել են 30-ը։

◆ Յուլիսի 19-ին նշանակված է Թիֆլիսի բնակարան վարձողների ու էժանագին բնակարանատէրերի ընկերութեան նիստը՝ քննելու Վերայում ընկերութեան ձեռք բերած մի դեսեատին հողաբաժնի վրա շէնքեր կառուցանելու հարցը։

◆ Յուլիսի 15-ին, ցերեկ. ժամը 2-ին, [illegible] գնացող № 2 մարշրուտի № 15 վագօնը Գօլօվինսկի պրօսպեկտի վրա Արտիստական թատրօնի հանդէպ ընդհարվել է կանգնած № 4 մարշրուտի № 102 վագօնին այնպիսի ուժով, որ վերջինիս վատմանն ու վագօնում նստողներից ոմանք ջարդուածքներ են ստացել։ Այդ մասին կազմվել է արձանագրութիւն։

◆ Թիֆլիս է վերադարձել և ստանձնել իր պարտականութիւնները քաղաքագլխի օգնական իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Արձակուրդից վերադարձել է ու ստանձնել իր պարտականութիւնները քաղաքային վարչութեան անդամ Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Թիֆլիսում, ինչպէս յայտնի է, գոյութիւն ունի աքսորական-տաժանակիրների ընտանիքներին խնամատար մի ընկերութիւն։

վայր, մենք այցելեցինք։

Այս խրճիթները, որոնք կոնաձև են, շինված են ցցված և իրար վրա, խաչաձև դրված բարակ փայտերից. փայտերի վրա ամրացված է թաղիք, իսկ թաղիքի վրայից բարակ եղէգից գործած խսիր։ Խրճիթի փոքրիկ դռնակով մտնում ենք ներս. բոլորովին հասարակ կահ-կարասիներ. թէև մեր մտած խրճիթը հարուստ կալմիկի տունն է. յատակի վրա տարածված է մի թաղիք. ահա մի սեղան հազիւ թզաչափ ոտներով, մի քանի ներքնակներ դրված են պատերի մօտ. մի այլ փոքրիկ սեղանի վրա դրված են կճուճներ, փայտեայ գդալներ և այլ ամաններ. պատերից որպէս զարդարանք կախված են ձեռագործ կտորներ։

Հետաքրքրական է կալմիկ տանտիկինը. երկար սաթաման վարսերը հիւսելով, նա դրել է իր ծամերի համեմատ այսպէս կոչված մի սև շորից կարած պարկի մէջ և կախել է աջ ու ձախ ուսերից։ Գլխին ունի ադամարդու պէս մորթէ գլխարկ, շորերը հասարակ, գիւղական պարզ հագուստներ, մէջքին արծաթեայ գօտի։ Իսկ կալմիկ օրիորդն իր վարսերը չի դնում պարկի մէջ այլ հիւսած կախում է մէջքից։

Ժամանակն անցաւ բաւական աննկատելի կերպով. վերջին անգամ մենք այցելեցինք մի գեղեցիկ այգի, շատ մօտիկ բարակներին, ուր նուագում էր լարանուագ երաժշտախումբ. քիչ էլ երաժշտութիւնը լսելուց յետոյ, այդտեղի հասարակութեան մէջ էլ մենք ցրեցինք թերթիկներ և ժամը 8-ին պատրաստվեցինք ճանապարհվելու դէպի Կալմիցկի-բազար։

Նորից մենք տեղաւորվեցինք դիլիժանսներում։ Այս անգամ իմ կողքին տեղ են բռնել նաև երկու գիւղական վարժուհիներ, որոնք մօտ հարիւր հոգի եկել էին էքսկուրսիայի դէպի Թենակի։

Նրանցից մէկը, նստած աջ կողմս, շիկահեր և արևահար դէմքով, պարոն, հարցնում է.

— Ներեցէք պ., դուք էսպերանտիստ էք։

— Այո,—պատասխանում եմ ես։

— Իսկ ինչ է նշանակում ձեր նշանի վրա գրված «U. E. A.» տառերը։

— «U. E. A.» նշանակում է «Universala Esperanta Asocio», այսինքն՝ «Համաշխարհային էսպերանտական Միութիւն»։ Այս ընկերութեան անդամակցում է բոլոր երկիրների էսպերանտիստների մեծամասնութիւնը. ընկերութիւնը բոլոր այն քաղաքներում, ուր կան էսպերանտիստներ և էսպերանտիստական ընկերութիւն, ունի ներկայացուցիչներ, որոնք իւրաքանչիւր մի ճանապարհորդ էսպերանտիստի տալիս են նրա ցանկացած տեղեկութիւնները իրենց շրջանի վերաբերեալ և ուրիշ զանազան դիւրութիւններ։

Վարժուհին, գոհ իմ պատասխանից, յայտնում է շնորհակալութիւն։ Ես տալիս եմ սրանց էլ թերթիկներ. պահանջում են նաև դասագրքեր, բայց դասագրքերը արդէն վաճառել-վերջացրել էինք։

Բոլորովին աննկատելի կերպով մենք շուտով հասանք Կալմիցկի-բազար. դեռ շոգենաւի տեղ հասնելուն մնում էր մօտաւորապէս կէս ժամ, և, որպէս զի պարապ չը մնայինք, այցելեցինք կալմիկների աղօթատունը, մի չափազանց հետաքրքրական վայր։ Աղօթատունը դրսի կողմից բաւականին նման է եւրօպական աղօթատանը. նախ պտտում ենք շէնքի շուրջը և ապա մտնում ենք ներս։

Կալմիկ մանչին (տիրացուն) առաջնորդում է մեզ ներս, ուր ամբողջ պատերը զարդարված են չաստուածների առեղծուածային նկարներով. խուրուլը (այդպէս է կոչվում կալմիկների աղօթատունը) ունի մի փոքրիկ խորք, որը կարելի է նմանեցնել մեր խորանին. այդտեղ դրված է մի սեղան, որի վրա շարված են զանազան իրեր. նոյնպէս և այդ սեղանի վրա ցցված են բազմաթիւ փոքրիկ փայտեր, որոնց վրա դրված են լուսամփոփաձև կտորներ, զարդարված ասեղնագործ նկարներով։

Խորքի աջ մասում, պատուհանի մէջ դրված են զանազան երաժշտական գործիքներ, այն է՝ սրինգ, եղջիւրաձև մետաղեայ քանդակազարդ շեփորներ և այլ անծանօթ գործիքներ։

Ձախ մասում դրված են փոքրիկ ամաններ՝ լցված բրինձով, ջրով և այլ հեղուկներով. նոյնպէս և դրված են հացի կտորներ, շաքարեղէն, խմորեղէն և զանազան ուտելիքներ, որպէս զոհ իրանց չաստուածների համար։

Խորքի առաջամասում դրված են փոքրիկ, երկարաւուն և կարճոտնեայ սեղաններ սպիտակ սփռոցներով. սեղաններից մէկի վրա դրված է մի մետաղեայ զանգակ և դարձեալ մի աման՝ բրինձով լցված։ Սեղանների մօտ տարածված են փոքրիկ, փափուկ օթոցներ, ուր նստում է կալմիկ գելունը (քահանան) պաշտօնակատարութեան ժամանակ։

Մեր հետաքրքրութիւնը յագեցնելուց յետոյ դուրս եկանք խուրուլից։ Լսվեց շոգենաւի գալու սուլոցը, և մենք շտապեցինք դէպի ափը։ Շոգենաւը սուլեց երրորդ անգամ և մենք թարմ ու ուժեղ տպաւորութիւնների տակ մեկնեցինք դէպի Աստրախան։

Արշալույս Ջանիկ

Աստրախան

ԵՐԿՈՒ ՄԱՆԻՇԱԿ

(Պօլօնսկիից)

—

Բարձունքում, քարէ գլխի մօտ, ալպեան եղնուս արմատներով տարածված, փոթորիկներից կտրտված անտառի մութ ծայրում ծաղկում է մանիշակը։ Լեռների ճիւղաւորութիւնների ետևը, հօրիզօնում լուսանում է առաւօտը։ Կապոյտում վարդագոյն բծերով շողշողում են յաւամպեայ գագաթների մշտնջենաւոր ձիւները. խորունկ կիրճերից՝ ինչպէս երկնագոյն ծուխ՝ սողում են ամպերը...

Նրանց միջից բարձր քարաժայռը փայլում է այնպիսի շլացուցիչ բաց-կարմիր լոյսով, որ մանիշակին թւում է, թէ նա բոցավառվում է հէնց իր բարձրութեան մօտ սիրով ներշնչված, և մանիշակը հիանում է նրա գեղեցկութեամբ ու գոլորշիանում քնքոյշ բուրմունքով։

Յանկարծ մի ինչ-որ բան երևաց... Զոր, դեղին սալի վրա նստել էր մի մոխրագոյն թռչուն ու ծվլում...

— Ես ծանօթ եմ քո քոյրերից մէկի հետ,—ծվլաց թռչունը։—Այնտեղ, հեռու հիւսիս-արևելքում ողորմելի պուրակում, վայրի մորենու թփերի ետևը խանդակի մօտ ծաղկում է նա։ Եւ այնպէս նա սիրելի էր այն ժամանակ, երբ սոխակներն էին երգում ու անձրևն էր կայլակում, իսկ ես դուրս էի նայում թանթրվենու թփի մէջ թաղնված իմ բնի միջից...

— Ա՜խ, եթէ դու ծանօթ ես իմ այն հեռաւոր քրոջ հետ և եթէ դու դարձեալ երբևիցէ հանդիպես նրան, ասա, որ ինձ շըրջապատող բոլոր քարաժայռերից կայ միայն մի հատ քարաժայռ... Նա բոլորից էլ շուտ է հանդիպում աշխարհ կրող Աստծուն։ Արծիւ թագաւորները թռչում են հանգստանալու նրա կրծքին. Նրանք գիտեն, որ ոչ փոթորիկներ, ոչ անձրևային փփրացող գետակներ չեն կարող յաղթել նրան... Ասա սիրելի քրոջս, որ [illegible] ինձ, երբ [illegible] մօտ՝ երբեմն [illegible] իմ խոնարհ [illegible]

— Այնտեղ, [illegible]

—ծվլում է [illegible] բարձրութիւններ, [illegible] րաժայռեր [illegible] այնտեղ։

— Ուրեմն ինչ համար է նա այնտեղ բուրում։

— Նա՝ քո [illegible] բուրմունքն [illegible]

— Կարմիր [illegible] սպիտակ [illegible] քայլ է հեռանում, [illegible] նում է նրան [illegible] երբ կանաչ [illegible] վրա...

— [illegible] րաժայռ...

— Ոչ, դու [illegible] առնել է նա... [illegible] լու նրան, [illegible] ված...

Մանիշակը [illegible] մտածել։

— Դէ՛հ, սիրելի [illegible] իմ հեռաւոր [illegible] Մնաս բարև, [illegible]

[illegible]

[illegible]

Այդ ընկերութիւնը իր միջոցները ուժեղացնելու նպատակով նորերս դիմել է Թիֆլիսի քաղաքագլխին, խնդրելով ընկերութեան կրծքանշաններից տարածել քաղաքի ազգաբնակութեան մէջ։

◆ Կովկասի հանքային վարչութիւնը թոյլատրել է Ի. Ն. և Ա. Գ. Տէր-Ղուկասեաններին պղնձի հանքի հետազօտութիւններ կատարել Ղազախի գաւառի «Շէնի-Առաջի-Եալ» կոչված տեղում։

◆ Երէկ հեռագիրը հաղորդեց Գանձակի ոստիկանապետ Բաննիկովի սպանութեան մասին քաղաքային այգու մօտ։ Պարզվում է, որ Բաննիկովը սպանվել է յուլիսի 14-ի գիշերվայ ժամը 11-ին, երբ նա ոստիկանատնից դուրս գալով քաղաքապետի ուղեկցութեամբ անցնում էր քաղաքային այգու մօտից։ Այդտեղ էլ դուրս է թռչում չարագործը և մաուզեր ատրճանակի երկու հարուածով սպանելով՝ անյայտանում է մթութեան մէջ։

◆ Մեծ-Ղարաքիլիսայից մեզ գրում են. «Յուլիսի 15-ին, երկուշաբթի օր, սկսվեցին Ա. Քալանթարի դասախօսութիւնները այստեղի կաթնատնտեսական դասընթացքներում։ Ամառվայ ընթացքում կը կարդացվեն մինչև տասն դասախօսութիւն։ Առաջին երկու դասախօսութիւնը նուիրված էին տնտեսական այն պայմանների քննութեան, որոնք ազդում են կաթնատնտեսութեան և կենդանաբուծութեան վիճակի և կազմակերպութեան վրա։ Դասախօսը առաջ բերեց մի շարք գործնական օրինակներ և նրանցով լուսաբանեց իր հիմնական թեզիսները։ Օրինակները վերցված էին կովկասեան իրականութիւնից։ Երեկոյեան տեղի ունեցաւ Ա. Քալանթարի դասախօսութիւնը մոգական լապտերի միջոցով։ Դասախօսութիւնը նուիրված էր կենդանիների ցեղերի նկարագրութեան և նրանց համեմատական արժանիքների գնահատման։ Ներկայ էին դասախօսութեան բացի Ղարաքիլիսայի կուրսերի ունկնդիրներից նաև մասնաւոր հետաքրքրվողներ»։

◆ Բագուի քաղաքային վարչութիւնը վճռել է արդիւնագործել քաղաքի սահմաններում գտնվող իր սեփական նաւթաբեր հողերը։ Այդ նպատակով նա դիմում է արել տեղական նաւթային ֆիրմաներին, իմանալու համար թէ նրանց շահագործումը խոշոր եկամուտ կը տա՞յ քաղաքին։

◆ Կարսից մեզ գրում են. «Յուլիսի 14-ին, ճաշից յետոյ, բժ. Ղազանջեանցի երիտասարդ կինը ատրճանակով ինքնասպանութիւն գործեց։ Հանգուցեալը հարուստ տան աղջիկ էր և հարուստ բժշկի ամուսին, վերին աստիճանի համեստ էր և սիրված ու յարգված բոլորից։ Աշխարհային ոչ մի բաւականութիւնից զուրկ չէր, բայց և այնպէս զզված էր կեանքից։ Նա մի քանի անգամ փորձել էր ինքնասպանութիւն կատարել, բայց ամեն անգամ էլ անաջող։ Եւ միայն ամսիս 14-ին աջողեցրեց իր վաղուցվայ մտադրութիւնը»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ներկայ տարվայ յունվարի 22-ին Փետրվարի 19-ի փողոցի № 44 տանը ժամագործի խանութ ունեցող Անդրէյ Պետրովիչ Խաչատուրովի բացակայութեան միջոցին նրա բնակարանից գողացել էին արծաթեայ ու չուգունէ ժամացոյցներ, ոսկեայ մատանիներ և այլն, ընդամենը 600 ր. արժողութեամբ։ Գողացողները և տարված իրերը այն ժամանակ չը գտնվեցին։ Ներկայումս խուզարկու ոստիկանութեան բաժանմունքը տեղեկութիւններ է ստացել, որ յիշեալ գողութիւնը կատարել են Վասօ Դօգինօվը և Թիֆլիսի նահանգական բանտում ներկայումս բանտարկված Սարիբէգ Գրիգորիէվիչ Կարապետեանցը։ Գօգինօվը կալանաւորված է, բայց չէ խոստովանել իր արած գողութիւնը, իսկ բանտարկեալ Կարապետեանցը խոստովանել է, որ այդ գողութիւնը ինքը կատարել է Գօգինօվի հետ միասին։

◆ Մայիսի 6-ին Կախէտինսկայա փողոցի վրա Սղնախի գաւառի Ներքին-Մաչխաանի գիւղի բնակիչ Սիմէօն Ստեպանօվիչ Շանշաշվիլիից, դրամի քսակ ձգելու միջոցով, գողացել էին 700 րուբլի, որի մասին նա ժամանակին յայտնելով 6-րդ մասի պրիստաւին՝ ինքը գնացել էր գիւղ։ Գողացողները անյայտ էին։ Խուզարկու բաժանմունքը տեղեկութիւն ստանալով, որ գողացողը յայտնի պրօֆեսիօնալ գող Բայանդուրօվն է, մի քանի գողերի լուսանկարներ ուղարկում է Սղնախի գաւառապետին Շանշաշվիլիին ցոյց տալու համար։ Վերջինս ճանաչում է Բայանդուրօվին։ Դրա հիման վրա էլ վերջինս կալանաւորված է։ Նա Թիֆլիսի գաւառի Դաղէթ-Խաչէն գիւղացի Միխայէլ Եգօրօվն է, որ և միևնոյն ժամանակ կոչվում է Աւ. Բայանդուրօվ։

◆ Յուլիսի 8-ին Նիկօլայէվսկայա փողոցի № 84 տանը ապրող պաշտօնաթող պօլկօվնիկ Դմիտրի Իվանօվիչ Շելուգչենկօյի բնակարանից, ամբողջ ընտանիքի բացակայութեան միջոցին, գողացել են ոսկեղէն և արծաթեղէն իրեր 316 րուբլու արժողութեամբ։ Կասկած է յայտնված նոյն տան դռնապան Բօրչալուի գաւառի Գերգեր գիւղացի Իվան Զուլամօվիչ Մուրադօվի վրա, որը ջանդատաւորի բացակայութեամբ թողել է պաշտօնը և վերադարձել իր գիւղը։

◆ Թիւրքահպատակ Մարգար Կրէմօյեանը (տաւարական), որ ժամանակաւոր կերպով իջել է Գօլօվինսկի պրօսպէկտի վրա «Ֆլօրիդա» հիւրանոցում, յուլիսի 14-ին յայտնել է ոստիկանութեանը, որ նոյն օրը Թիւրքիայից գալով Թիֆլիս և կայարանի հրապարակի վրա կամենալով կառք վարձել յիշեալ հիւրանոցը գնալու համար, նկատել է որ պիջակի ներքևի գրպանից հանված է փոքր քսակը, որի մէջ կար 780 րուբլի կանխիկ դրամ, 6 հատ կուպօն՝ իւրաքանչիւրը 4 ր. արժողութեամբ, ազգային անցագիրը և ծննդական-վկայականը։ Ով է գողացել քսակը և ինչպիսի պայմաններում գանգատ յայտնողը չը գիտէ և ոչ ոքի վրա էլ չէ կասկածում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Դիլիջան, 10 յուլիսի

Երկուշաբթի, յուլիսի 8-ին, հայ դերասանների խումբը տուեց իր առաջին ներկայացումը։ Խաղացին՝ «Մարվող ճրագներ» և «Ես մեռայ»։

Առաջինն անցաւ ընդհանրապէս անբաւարար, երկրորդը՝ գոհացուցիչ։

Շեշտելու է, որ նոյն այդ միջոցին ակումբի «շվէյցարն ու սմօտրիտէլը» փորձում էին ընթերցարանն ազատել ընթերցողներից լօտօյի համար, բայց չաջողվեց։

Ո՞ւր է գիտակից հասարակութեան բողոքը նման տգեղ երևոյթների դէմ։

Minor

Նոր-Բայազէտ, 11 յուլիսի

Յուլիսի 4-ին քաղաք եկան դերասաններ Ամօ-Խարազեան, տ. Նինուէլ և Մուրադեան, որոնք տեղական սիրողների մասնակցութեամբ մտադիր են տալ մի շարք ներկայացումներ։

Յուլիսի 7-ին հայոց դպրոցի թատրոնական դահլիճում խաղացին Շիլլերի «Սէր և խարդաւանք» յայտնի ողբերգութիւնը՝ 5 գործողութեամբ։ Իսկ 10-ին ներկայացրին «Վարձու կին» վօդեվիլը մէկ արարուածով և «Հայր» դրաման 3 գործողութեամբ։

«Վարձու կին» վօդեվիլը, որ խաղացին Ամօ-Խարազեան, տ. Նինուէլ, Մուրադեան, Ազարեան և օր. Գօրոյեան, անցաւ սպասածից աւելի աշխոյժ և մեծ զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։ Այն ինչ դրաման—«Հայրը»—որը որքան ժամանակակից է և որը պարունակում է հոգեկան տանջանքների և ընտանեկան կասկածանքների մի ամբողջ շարան, այնքան էլ մատչելի չէր մեր քաղաքի հասարակութեան, թէպէտ խաղը աջող անցաւ ընդհանրապէս։ Գլխաւոր դերերը—ռոտմիստր և Լաուրա—որ կատարեցին Ամօ-Խարազեան և տ. Նինուէլ, անցան փայլուն կերպով և մեծ պատրաստակամութեամբ։ Իսկ երկրորդական դերերը—պաստօրինը՝ Մուրադեան, բժշկինը՝ Զալդրանեան, Նէյդինը՝ Պահարէ, Բերտայինը՝ օր. Գօրոյեան—կարողացան խաղը իր հաւասարակշռութեան մէջ պահպանել։ Բոլոր խաղացողները վարձատրվեցին բուռն ծափահարութիւններով։

Թատրոնը կիսով չափ դատարկ էր, ուր փայլում էր բացակայութեամբ վաճառական դասը՝ բացի մի-երկուսից։ Դա պէտք է վերագրել այն բանին, որ տոմսակներ չէին տարածել խանութներում, այլ հրաւիրվում էին գնել ինքնաբերաբար թատրոնի կասսայում։ Միթէ դրան սովոր է հասարակութիւնը, որը շռայլութեան դէպքերում րուբլիներ է շպրտում, իսկ թատրոնին զլանում է մի տոմսակ վերցնել։

Երեք օրից յետոյ տրվելու է երրորդ ներկայացումը։

Գ. Սինանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօզդօկ, 1 յուլիսի

«Մշակի» № 139-ում տպված՝ «Մօզդօկի հայոց դպրոցի ցաւերից» վերտառութեամբ տպված թղթակցութիւնը, որ կրում է «Ծխական» ստորագրութիւնը, ստիպում է ինձ ցոյց տալ վերոյիշեալ գրութեան տենդենցիօզ բնոյթը։

Պատասխանենք այդ յօդուածի բոլոր կէտերին.

1) Ծխականի գրուածքից այն տպաւորութիւնն է ստացվում, թէ վերակացութեան պաշտօնը մանկավարժական խորհուրդը ուզում է յանձնել տ. Աւագեանին և այն էլ առանց վարձատրութեան։ Սխալ է։ Դպրոցը վարձովի 1 կամ 2 վերակացու չունենալով, ուսուցչ. խումբը համաձայնվել է հերթականութեամբ տանել այդ պաշտօնը, ու երբ ժողովում սահմանվում էր հերթը, խնդրվեց տիկնոջը ևս մասնակցել հերթականութեան, ինչպէս համաձայնվեցին աւ. ուսուցիչն ու մի ուրիշ դասատու, որոնք պարտաւոր չը լինելով հանդերձ վերակացութեան հերթին մասնակցելու՝ յանձն էին առել, գործը աւելի աջող տանելու նպատակով։ Սակայն, երբ տիկինը, մէջ բերելով պայմանը, հրաժարվեց, մանկ. խորհուրդը երբէք էլ չը պնդեց իր խնդիրը, քանի որ օրինական հիմք չունէր։

2) Տիկինը հոգաբարձութեան առաջարկութեամբ է արձակվել հետևեալ պատճառաբանութեամբ.

ա) Հոգաբարձութիւնը, ի նկատի ունենալով որ աշակերտութեան 66°/₀-ը աղջիկներ են, որոշեց ունենալ 2 այնպիսի վարժուհիներ (ուսուցչական խումբը բաղկացած է լինում առնուազն 6—7 հոգուց), որոնք ունենալով միջնակարգ կրթութիւն՝ կարողանային վերցնել մինչև 24 դաս և այդպիսով ուսումնարանին օգտակար լինելու տեսակէտից՝ յարմարութիւն ունենային դասերի սկզբից մինչև վերջը մնալ դպրոցում՝ աշակերտութեան մէջ։

բ) Նրանք միւս ուսուցիչներին համահաւասար կը մասնակցէին դպրոցում -նիւթական բացակայութեան պատճառով—ընդունված հերթ. վերակացութեան, որից հրաժարվում էր տ. Աւագեանը։

գ) Տալով տիկնոջը դասեր, ազատ էր մնում 17 դաս, որը կը ծանրաբեռնէր միւս ուսուցիչներին, իսկ մէկ ուրիշն էլ հրաւիրվում էր—տեխնիքական պատճառներից դրդված—միմիայն 7 դասով, որ նոյնպէս անցանկալի էր։

դ) Տ. Աւագեանը հրաժարվել է ըստ մանկավարժական խորհրդի որոշման աշակերտութեան մաքրութեան նայելուց, ի միջի այլ անհիմն պատճառների յիշելով իր ֆիզիքական անկարողութիւնը, ուստի մանկ. խորհուրդը հիւանդութեան պատճառով այդ պարտականութիւնից ազատեց։ Ինքս էլ դէմ չեմ գնացել նրա չը հրաւիրվելուն՝ ընդունելով յիշեալ պատճառաբանութիւնների հիմնաւորութիւնը և բացի այդ ունենալով այն հանգամանքը, որ տ. Աւագեանը պարբերաբար ուշանում էր դասերից, ու երբ ցանկանում էի այդ երևոյթի առաջն առնել, ինձ կողմնակի ճանապարհով հաղորդում էին, թէ տիկնոջ առողջութեան վրա վատ կազդի և կամ այս ինչ հարցմունքս (ուշանալու ժամանակամիջոցի մասին) կողմնակի ճանապարհով կը պատճառաբանվի հիւանդութեան շարժառիթ...

3) Միանգամայն զուրկ է հիմքից 3-րդ կէտը, որովհետև ես եմ առաջարկել հրաւիրել վարձատրութեամբ վերակացու, բայց, դժբաղդաբար, հոգաբարձութիւնը մերժել է նիւթականի պատճառով. և վերջապէս ինչու ուսուցիչները համաձայնվեցին ձրի կատարելու, իսկ քահանային, որպէս հոգաբարձութեան քարտուղարի, վարձատրութիւն տալու առաջարկն էլ ես չեմ արել և այդ հարցի որոշման մէջ ես մասնակից էլ չեմ եղել, քանի որ չէր վերաբերում ուսումնականին, հետևապէս և ինձ։

Վերջապէս ես հոգաբարձական ժողովում իմ պարտքս եմ համարել բոլոր յաւելեալ աշխատանքների վարձատրման հարցը դնել, բայց այդ առաջարկել եմ դասագինը իր ողորմելի գնից դարձնել առ այժմ գոնէ 25 ր., որ և ընդունվել է։

Աւագութեան համար ես 150 ր. աւելի վարձատրութիւն չեմ պահանջել։ Նախ իմ աշխատանքիս վարձատրութեան չափը գնահատելու իրաւունքից ոչ ոք չէ կարող զրկել ինձ, երկրորդ՝ ես պէտք է առաջիկայ տարի միւս ուսուցիչներից որպէս աւագ 50 ր. աւելի ստանայի։ Վերջապէս դրանք շատ փոքր խնդիրներ են, որոնցով դժբաղդաբար երբեմն թղթակիցները սիրում են ընթերցողներին զբաղեցնել։ Պէտք է ի վերջոյ աւելացնեմ, որ երբէք մեր դպրոցում ձեռագործը ողբալի դրութեան մէջ չէ եղել. այդ առիթով իրանց գոհունակութիւնն են յայտնել թէ Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձուն և թէ Թեմիս առաջնորդը։

Աւ.-ուսուցիչ Մօզդօկի հայոց դպրոցի՝
Պ. Յովհաննիսեան

Ծանօթ. խմբ.—Միևնոյն թղթակցութեան առիթով մի հերքմնագիր էլ ստացված է Մօզդօկի հայոց եկ.-ծխ. դպրոցի հոգաբար[illegible] հերքվում են նոյն հիմքերը, ինչ որ Մօզդօկի ծխ. դպրոցի աւ.-ուսուցչի վերևի նամակում, ուստի խմբագրութիւնը, ի նկատի ունենալով թերթի էջերի սղութիւնը, յարմար համարեց տպագրութեան չը տալ այդ գրութիւնը։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Անգլիական թերթերը Հնդկաստանից լուրեր են ստացել, որ այնտեղ երկիւղ են կրում, թէ մի գուցէ մահմեդականների ընդհանուր ապստամբութիւն սկսվի, եթէ Անգլիան ճնշում գործ դնէ Թիւրքիայի վրա։

◆ Բօլգարիան դիմել է Ռումինիային, խնդրելով զինուորական օգնութիւն Թիւրքերի դէմ։

◆ Վիէննայում հեռագիր է ստացված, որ Ռումինիան վճռել է օգնել Բօլգարիային՝ դուրս վռնտելու Թիւրքերին Ադրիանուպօլսից։

◆ Սօֆիայում տիրող դրութեան վտանգաւորութիւնը նկատի առնելով, Կարլոս Թագաւորը հեռագրով նախազգուշացրեց սուլթանին Թիւրքական արշաւանքի ի զուր լինելն ու վտանգաւորութիւնը։

◆ Վիէննայի «Zeit» լրագիրը հաղորդում է, որ Իտալիան բաւականին խիստ ձևով պահանջել է Ռումինիայից անմիջապէս հաշտութիւն կնքել Բօլգարիայի հետ։

◆ Ստաւրօպօլի նահանգում սաստիկ անձրևներից ու կարկուտից առաջացած վնասը հասնում է 6 միլիօն րուբլու։

◆ Սուլջ-Բուլաղի Թիւրքական նախկին հիւպատոսը, որ յայտարարել էր Ատրպատականը Թիւրքիային միացված, կանչված է Պօլիս։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

15 յուլիսի

ԼԻԲԱՒԱ։ Օդաչու ֆօն-Վիլլէշը երէկ, երկրորդ անգամ թռիչք կատարելիս, 50 սաժէն բարձրութիւնից ընկաւ ծովը իր ապարատով։ Օդաչուն փրկված է։

ՕՏՐԻՎ։ Օդաչու Շամբէնուան թռիչք կատարելիս ընկաւ և ջարդվեց։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Ցերեկվայ ժ. 12-ին նահանգապետի, դասային ներկայացուցիչների, տօնավաճառի առևտրականների ներկայութեամբ, մաղթանքից յետոյ, բացվեց Նիժեգօրօդեան տօնավաճառը։ Ներկայ եղողների անունից հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ արտայայտող հեռագիր է ուղարկված Նորին Մեծութեանը։

ՊՐԱԳԱ։ Բալկանեան պատերազմի պատճառով սլաւօնական ժուրնալիստների համագումարը յետաձգված է մինչև 1914 թիւը։

ՍԱՐԱՏՕՎ։ Պրօֆ. Զաբօլօտնիի մասնակցութեամբ, նահանգապետի նախագահութեամբ, տեղի ունեցաւ բժիշկների խորհրդակցութիւնը ժանտախտի դէմ միջոցներ ձեռք առնելու մասին։

ՄՕՍԿՎԱ։ Պօդօլեան գաւառի Օստաֆիևօ գիւղում, որ իշ. Վեազեմսկիների հայրենական դաստակերտն է, և որն այժմս պատկանում է կոմս Շերեմետիևին, տեղի ունեցաւ Պուշկինի, Ժուկօվսկիի և իշ. Վեազեմսկիի արձանների բացումը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արգելք է դրված «Рабочая Правда» լրագրի երկրորդ համարի վրա։ Խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում 1034-րդ յօդուածի առաջին կէտի հիման վրա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Օդօլը ներկայանում է առաջին և միակ միջոցը ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու և ատամների փչացմանը միանգամայն յուսալի կերպով հակադրելու համար։ Անպայման այդօրինակ ներգործութիւնը հիմնաւորված է գլխաւորաբար Օդօլի յատկութեան վրա՝ թափանցել փչացած ատամների ու լնդերի լորձաթաղանթների ներսը և կարծես թէ սնունդ մատակարարել նրանց։

Հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել Օդօլի բոլորովին ինքնայատուկ ներգործութեան վրա այն ժամանակ, երբ ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու համար գործադրվող բոլոր այլ միջոցները իրանց ներգործութիւնն են անում միմիայն մաքրելու պրօցէսի ընթացքում, Օդօլը շարունակում է իր անտիսեպտիկ ներգործութիւնը էլ աւելի շարունակաբար՝ երկար ժամերի ընթացքում, ատամները մաքրելուց յետոյ։ Օդօլը ներս է ծծվում փչացած ատամների և լնդերի լորձաթաղանթների մէջ, որոշ աստիճան նրանց սնուցանում է, և բերանի խոռոչում մնացած այդ անտիսեպտիկ պաշարը պայմանաւորում է յետագայ ներգործութիւնը մի շարք ժամերի ընթացքում։ Օդօլի այդ նշանակալից յատկութիւնը յուսալի պահպանում է բերանը փտածութեան պրօցէսների զարգացումից և պահում ատամները առողջ դրութեան մէջ։

Մի սրուակի գինը **85** կ., մեծ սրուակը, որ կարող է բաւականանալ մի քանի ամիս, արժէ **1** ր. **50** կ.։

(M. 179586/179604)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թիւ ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են

հետևեալ վիպական երկերը.

1) [illegible] տանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, Թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հենրի Բօրդօյի, Թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ, վէպ. Յ. Սօլօվեանի . . . . —40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30°/₀ զեղջ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղջ կը լինի 25°/₀։

(5) 10—3

Բեթղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցու
եկեղ.-ծխ. խառն դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ուսուցիչ կամ ուսուցչուհի

Դասագինը 30 րուբ.։ Դասերի թիւը 17—20. Դիմել դպրոցի հոգաբարձական խորհրդի նախագահ Գարեգին Տէր-Ստեփանեանին մինչև օգոստոսի 1-ը, երեկոյեան ժամը 6—7-ը. Կրասնօգօրսկայա փող. № 16.

(չ.) 555. 3—2

Զարչօյի ծխ. դպրոցի I և II բաժանմունքների համար հարկաւոր է միջնակարգ կրթութիւն ստացած և ռուսերէն լեզուի մէջ փորձված

Մի ուսուցիչ

Աւանդելու է բացի կրօնից բոլոր առարկաները և պատրաստելու է եկեղ. երգեցիկ խումբ։ Տարեկան ռոճիկ 700 րուբ.։ Տրվում է մի սենեակ։ Առանց ճանապարհածախսի և վառելիքի։

Հասցէն՝ նախագահ հոգաբարձութեան
Գրիգոր ք. Տէր-Գրիգորեան
568. 4—2

Ախալցխայի Եղիսաբէթեան դպրոցի համար հարկաւոր են ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ 19 դաս ռուսաց լեզուի՝ IV, V և VI բաժանմունքներում, 2 ռուսաց պատմութեան և 1 ռուսաց աշխարհագրութեան՝ V և VI բաժ.—22 դասը 550 րուբլի ռոճիկով։ 10 դաս կրօնի՝ I և II բաժ., 11 հայոց լեզուի՝ I և V բաժ. և 4 գրութեան—25 դաս 555 րուբլի ռոճիկով։

Կարապետեան դպրոցի համար ռուս. լեզուի, ռուս. պատմութեան և ռուս. աշխարհագրութեան 23 դաս 575 ր., և մարմնամարզութեան 14 դասի, երգեցողութեան 6 դասի՝ ընդամենը 20 դաս 400 ր. ռոճիկով, և մի գիւղատնտես, որն աւանդելու է 12 դաս բնագիտութիւն և 8 դաս գիւղատնտեսական գիտելիքներ, այլ և ունենալու է գործնական պարապմունքներ դպրոցի ագարակում։ Գիւղատնտեսի ռոճիկի և միւս պայմանների մասին կարելի է տեղեկանալ հոգաբարձութիւնից մինչև յուլիսի 25-ը, որին պէտք է դիմեն նաև խնդրատու ուսուցիչները։

567. 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный